



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1901



(7)

7

-48

ԹԵՌԱՓՈԽԱԾՈՍԻ
ՆԿԱՐԱԳԻՐԻ

17

P-46

3

ԹՀԱՓՐԱՍՏՈՒԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Հ. ԱՐՍԵՆ Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Ե ՄԻՒԹԵԱՐԵԱՆ ՈՒԽՏԵՆ



BANKS IN U.S.A.

1901

9137

235-62

Ա. Զ. Դ.

Թահովրաստոս՝ յԵրես քա-
ղաքէ Լեսբոս կղզւոյ, աշակերտ
էր Պղատոնի և Արխատուելի,
և վարժապետ Մենանդրի։ Բա-
զում գիրս բնախօսեաց զարա-
րածոց, այլ սակաւք կան առ
մեւք։ Ի իրատականն Նկա-
րագիրքս մի է յընտիր գրոց
նախնեացն, որ հակառակաւն՝
ախտիցն նկարուք՝ յորդորէ ըզ-
մարդիկ ի լաւութիւն, և յա-
մենայն ժամանակի և առ ամե-
նայն ազգս օդակար գտանի.

վասն որոյ և սակեղինիկ անուն
Ժառանգեաց :

Հելլէն բնագիրն բազում ու-
րեք յաղաւազէլոյ գրչաց մռայլ
ունի . է ուրեք ուր զնոյն բանս
նովին բառիւք կրկնագրէ , է զի
թերի զիմաստսն թողու , և այլ
երբեմն նկարագիր ընդ նկարա-
գրի թուի խառնեալ : Մեք
թարգմանեցաք որպէս և գը-
տաքս զստ ձուլադրոշմ արա-
րեալ ի Լիստիա , ի կարի կա-
րեւորսն ևեթ ծանօթս ինչ կար-
ճառօտս տուեալ ընթերցողաց :

Կամէաք համառօտել և ըդ-
վարս իմաստասիրիս , Եթէ ստու-
դապատում գրեցեալքն թու-
էին . այլ ստոյդ վարք գրաւո-
րական արանց՝ մատեանքն նոցա
են : Անմոռաց յիշատակաց ար-

ժանի ի սորա վարս այն է , զի
այր իմաստասէր՝ որ սական քա-
րոզէր , թէ Զիք կորուստ չար
քան զժամանակին , նոյն ինքն
անցեալ զհարիւրամենիւք և ի
վախճանել եկեալ ասաց . Զիզլ
է ինձ մեռանել գեռ այն ինչ
սկսեալ լինել իմաստուն :

ԹԵՌԱՓՐԱՍՏՈՒԻ

ՆԿԱՐԱԳԻՐՔ ԲԱՐՈՒՑ

Թեռփրաստ առ Պողիկեն:

ԲԱԶՈՒՄ անգամ ածեալ զմբ-
տաւ յառաջագոյն՝ զարմացեալ
եմ և թերեւս ոչ դադարեցաց
ի զարմանալոյ, թէ քանիզի նոյն
մի օդք են աշխարհիս Ելլագայ
և ամենայն Հելլէնք նովին օ-
րինօք են դաստիարակեալ, զի՞
է զի ոչ ամենեքեան զնոյն կարգու-
վարուց բերեմք յանձին:

Եւ զի ի վաղ ժամանակաց
հայեցայ ես ի մարդկան բնու-

թիւն՝ կեցեալ ամս իննսուն և
ինն և ընդ բազում ազգի ազգի
բարս եվեալ կենցաղակից, և հա-
ւաստեաւ մանր զննեցի զբարիս
ի մարդկանէ և զարսն, արժան
համարեցայ՝ ով Պողիկզէս՝ զիւ-
րաքանչիւր նոցա զիարդս կենաց
ընդ գրով արկանէլ։ Արդ եղից
քեզ առաջի ըստ ազգի զամե-
նայն բարս սոցա* և զո՞չ վա-
րուց։

Ակն ունիմ, ով Պողիկզէս, թէ
որդեակը մեր ի լաւութիւն
կրթիցին՝ առ ձեռն ունելով զյեւ-
շատակս այսոցիկ, յորոց իբրև
յօրինակաց այրընտիր լինիցին՝

* Իմա զշարացն միայն, զոր ի
յետին տեղւոյն յիշատակեաց, և ոչ
ոթէ զերկաբանչիւր զբարեացն և
զշարաց, որպէս թուեցաւ երբեմ,
և կարծիք եղեն թերի լինելոյ զբոցս,
զի ոչ բերէ և զատաբինեացն նկա-
րագիրս։

ընդ պարկեշտագոյնսն վարել
կենցալ զի մի քան զնոսա ինչ
յետնեալ դտանիցին։

Եւ արդ ես բան ի գործ ա-
րարից, իսկ զհետ դալ և տե-
սանել՝ եթէ արդար խօսիցիմ,
այն քո է։ Եւ թողեալ զերկայն
նախաշաւիզ խօսից իբացս՝ բա-
նիս սկիզբն աւսից յայնցանէ որ
ի խորամանգութիւն հատեալ
քըն իցեն։ Եւ անտի սկսեալ՝
նախ եգից զահման նորա, ա-
սկա որպէս ինչ ոք խորամանգն
իցէ՝ զայն կարգեցից, և զինչ
բարք նորա։ Սոյնպէս և զայլ
ամենայն ախտս, որպէս յանձին
կալայ, ջանացայց կարգաւ մի
ըստ միոշէ յանդիման առնել։

առ զշարեալս հեղութեամբ խօսի:

Եւ որ ստիպաւ տեսանել ըդնաա և խօսել ինչ կամիցին, պատուիրէ գառնալ անդրէն յայլում ժամու. և պատճառի՝ թէ այն ինչ եկեալ է, և թէ օրն տարածամեալ է և ինքն տկար:

Եւ որ փոխ ի նմանէն խընդրիցեն և հանգանակ ժողովիցեն, Տուրեառ վաճառոց ոչ է, ասէ. և յորժամ ոչ ինչ վաճառիցէ, Շահավաճառ՝ ասէ՝ բարեոք ընթանայ: Թէ լսէ ինչ, ըլսելոյն առնէ, և թէ տեսանե՝ չհայելոյն: Ոչ երբէք ասէ յայտնոր գործէն, այլ թէ Խորհուրդի մտի ունիմ, և թէ խոստովան ինչ ուրեք լինիցի, Մոռացեալ եմ, ասէ: Ե ինչ զոր՝ Տեսից, ասէ, և զոր՝ Զգիտեմ, և է ընդոր Զարմանամ, և է ուրեք՝ զի Եւ ես ինքն զգոյն խորհիմ, ասէ:

Միով բանիւ, ձարտար է միշտ

Ա.

ՎԱՍՆ ԽՈՐԾՄԱՆԳՈՒԹԵԱՆ

ԱՐԴԻ խորամանդութիւն ըստ իւրում նկարագրին թուի լինել կեղծիք բանից և զործոց առ ի չարն: Եւ խորամանդ այն ոք է, որոյ առ թշնամիսն մատուցեալ՝ խօսել կամի ընդ նոսա, որպէս այն թէ ոչ ինչ ամենակին ունիցի իսկթ ընդ նոսա, և յերեսս գովիզ զնոսա, որոյ ի թիկանց գարան գործէր. ընդ վնաս նոցա տրամի ընդ նոսա, և չարախօսացն իւրոց թողութիւն չնորհէ: Յաղագս անձին բամբասանաց և առ զրկեալս և

յայս ձեւ խօսից . Ե՛հ ոչ հաւատամի ոչ կարծեմ , զարմանկք է . և յաւելու թէ Այլ յայլմէ եղեալ եմ . և թէ Այդ ոչ պատմեցաւ ինձ , նոր և չքնար իրք են առ իս . Երթ այլում ումեք ասա . քեզ արդեւք անհաւատացից՝ եթէ նմա եդից մեղ , ոչ գիտեմ , տարակոյս է ինձ :

Այլ զգնյշ լեր , մի վաղվազակի հաւատացես այսպիսի ձայնից և պատ ի պատ բանից և շատ խօսութեանց , քան զոր չիք ինչ գտանել չար : Ի կեղծաւոր և ի նենգաժետ բարուց առաւել պարտ է զգուշանալ՝ քան յիժից :

Բ

ՎԱՍՆ ՍՈՒՏԱԿԱՍՊԱՍՈՒԹԵԱՆ

Սուտակասպասութիւն համարելի է վարք անպատեհ ի շահ սուտակասպասին , և սուտակասպաս այն՝ որ ճանապարհակիցից՝ ումեք եղեալ , ասիցէ . Առնուսու ի միտ՝ թէ որպէս ի քեզ ակնկառոյց կան մարդիկդ . ոչ ումեք յորոց ի քաղաքիս են լինի այս՝ բաց ի քէն . Երէկ գովեցար ի սրահին Ստոյիկեան . * զի իբրև արք աւելի քան զերեսուն ակմբեալ էին , և զըսցք ի մէջ անկան՝ թէ և լաւագոյն իցէ , աստի սկսեալ ամենեքեան

* Այս տեղի հասարակաց էր յաւաջն , և ազա կարգեցաւ ժողովարան Ստոյիկեան իմաստասիրաց :

ի վեր և ի վայր զքո անո
յեղյեղեցին։ Եւ այլ ինչ այ
պիսի ասելով, առնու զգուշու
թեամբի հանդերձէ նորա զծի
փոքրիկ։ Եւ թէ ունդ ին
յարդի արկեալ իցէ հողմոյ
վարսս գլխոյն, ծայրիւք մ
տանցն ինսամով ի բաց քաղ,
ժմանի և ասէ. Ծեսանես, երկ
օր է զի չեմ տեսեալ զքեկ,
ահա մօրուքդ ալեսորեալ է. ս
կայն և սյնպէս առ ախովք հ
սակիդ տակաւին ոչ ինչ ընդհա
յայլոց քաջաթուխ են հերբ

Եւ ի խօսել նորա՝ սաստ
այլոց լուռ լինել, և նմա լ
ի լու գովէ զնա. և իբրև գ
դարիցէ՝ ծափ զծափի հարկան
ձայն առնու՝ վկայէ թէ ամ
նաբարւոք խօսեցաւ։ Ի կատ
կել նորա՝ ցուրտ ծաղը արձ
կէ, և զծորձսն ընդ բերա
պնդէ, որպէս թէ ոչ կարացե
ունել զծաղին։

Որ յուղւոջ ընդ առաջ պա
ահիցեն, պատուէր աայ զտեղի
նել մինչև նա անցանիցէ. և
գնեալ տանձ և խնձոր՝ բերէ
այ որդւոց նորա ակնյանդիման
նորին, և ողջագուրեալ ասէ, իա
րոյ հօր սիրուն ձագունք։ Եւ
մրժամ նա հողաթափն դնիցէ,
զատնի բարեձև քան զօդն լինել
աէ։ Եւ թէ առ բարեկամ ոք
ուրեք գնայցէ, յառաջեալ պատ
սմաւոր ընթանայ, թէ Առ
էղ դայ. և անդրէն ընդ առաջ
նորա գարձ արարեալ պատմէ,
թէ Ազգ արարի։ Առանց ընդ
բնս ինչ ածելոյ կարօղ է պաշ-
տել անդանեդաղ և զոր ի կա-
նանց շուկայի։

* Կանանց չուկայ կուէր յԱթէնս
որ վաճառէին առաք բարձր ուստի
արձի թէ պատմութիւն մահման
պէտք որվացին մասապանի ՇԴԱՐԱՀ
ու ԹՀԱՐԱՐԱԿԱՆ

7/11. 19222
Ա. ԱՅԱՍՏԻ ԱՆԴՐԱ
ՎԱՐԱ. ԽԱՆԿԻԿԻ ԱՆԴՐԱ

ի սեղանակիցն լինելու յառաջ
քան զամենայն ոք ինքն ի գու-
վութիւն առնու զգինին. և թէ
մերձ բազմեալ իցէ, Ո՛չ, ասէ,
սրպէս յուշիկ ուտես, և առեալ
ինչ նմա ի սեղանոյն, Աղէ զայս
տես, ասէ, քանի համեղ է: Եւ
հարցանէ թէ մսիցի՞ և ինդրի-
ցէ այլ ևս արկանելիս, և զայս
ասացեալ ծածկէ զնա վերար-
կուաւ, և կարկառեալ յունին
նորա շնչէ, և ի խօսելն ընդ
այլս ի նա ինքն կառուցեալ պիշ
ունի զակն:

Եւ ի թատերն յափշտակեալ
ի մանկանէն զբարձկնեարն ինք-
նին արկանէ նմա: Գտանէ նորա
ասէ թէ գեղեցկաշէն է, և զա-
դարակէն թէ քաջատունկ, և
զկենդանագրէն թէ ճշգրտահան: Եւ
գլուխ ամենայնի, զամենայն
ինչ ասել և առնել թուի սու-
տակապասն, որովք կարծէն հա-
ճոյ լինել:

Պ.

ՎԱՍՆ ՄԱՐԴԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Մարդահամութիւն, զի սահ-
մանաւ ճշգրտեսցուք, և կենցաղ
անվայելուչ՝ ի պատճառս հեշ-
տութեան: Եւ անշուշտ մարդա-
հաճոյ նա է, որ ի հեռուստ ոք
ձայն արկեալ բարբառիցի և սյր
զօրութեան կարդայցէ, և յոյժ
զարմանայցէ, և երկոքումք ձե-
ռօք պինդ ունիցի, և սակաւիկ
մի ուղեկցեալ՝ հարցանիցէ, թէ
երբ միւսանգամ տեսանիցի զնա.
և այլ ևս գովութիւնս ասա-
ցեալ՝ այնպէս ուրեմն ի բաց
գնայցէ:

Նա ինքն եթէ յիրաւարա-
րութիւն կոչեսցի, ոչ միայն
յորոյ կողմանէն կայ՝ նմա ևեթ
հաճոյ լինել ինդրէ, այլ և ո-
սոխին. զի հասարակաց նոցա ի-

բաւարար լինել թուիցի . * և
զեկայն ասէ թէ ուղիղ ևս քան
զբաղաբացիսն իրաւաբանեն :

Եւ թէ ի ձաշ ուրեք հրա-
ւերեսցի , աղաչէ զկոչնատէրն
ձայնել զմանկունս իւր . և ի
մասնել նոցա առ նա , վաշ՝ ա-
սէ , քան թուզ թզոյ՝ առաւել
նման են սոքա հօր իւրեանց . և
առ ինքն ձգեալ համրուրէ , և
նսառոցեալ առ իւր՝ խազայ ընդ
նոսա ասելով Տիկ , Տապարիկ ,
և թոյլ տայ նոցա ննչել ի գոգ
իւր , թէ ափտ և նեղիցի : Եւ
զտղայն առեալ ի դայեկէն , ինքն
ծամէ և ջամրէ ինչ նմա , և ի
սոխչս մանկականս փաղաքչի , և
ճարպիկ ու ճարտար քան զհաւն
կոչէ :

* Յերկաքանչիւր կողմանց տոռ
խացն են մի մի իրաւաբարք ի վեճո ,
և մեւս ևս երբորդ՝ երկոցուն կող-
մանցն միջնորդ հասարակաց :

Դ

ՎԱՍՆ ՄԵԾԱՐԳՈՒԹԵԱՆ *

... Բաղրամ անդամ սափրէ
զէերմն , և զատամաւնսն ունի
սպիտակս , և զհանդերձն մինչ
չե հնացեալ սաէպ փոփոխէ , և
իւղովք անուշիւք օծանի : Ի հրա-
պարակսն առ սեղանաւորսն գե-
գերի . և ի վարժարանսն յայն
տեղիս յաճախիէ՝ ուր պատա-
նեակբն մարզին , և ի թատրն
յարժամ աեսարանք իցեն՝ եր-
թայ մերձ առ մեծամեծ զօրա-
վարսն բազմիւ :

Վասն իւր գնէ և ոչ ինչ ,
այլ զի առաքեսցէ հիւրոցն ի
հիւղանդիոն . շունս լակոնացիս
ի Կիւզիկոն , և մեղր հիւմիտեան

* Այլք զայս նկարագիր անվերնա-
գիր խառնեն ընդ երրորդին :

ի Հռոգոս, և պատմէ ապա ո-
րոց ի քաղաքին են, թէ զայս
ինչ և զայս արարի:

Քաջ գիտէ եւս մնուցանել ի
տան կտակիկ և ստանալ մար-
դավայրի և սիկելիացի աղաւնիս
և վեցս այծեմանց և բոլորշի
սրուակս թիւրիացիս և գաւա-
զանս ի Լակեդէմօնէ գալարունս
և գորդս անկուածոյս նկարա-
կերտս արամքը պարսկաստա-
ննօք, և վայրագաւիթ ի բոնա-
մարտկաց և գնդակախաղուց առ
պարէզ, և շուրջ յածեալ ցոյցս
առնէ հանապազ անդր ի ներքս
հրաւիրել իմաստասէրս, իմաս-
տակս, զինախաղացս և երա-
ժիշտս արուեստականաց : Եւ
հուսկ ապա ինքն ի հանդիսի
անդ ասէ ցմեւսն յաղագս հան-
դիսատեսացն, թէ նոյս է տո-
ւեալ զիսաղէտղն :

Ե

ՎԱՍՆ ՍՆԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Սնափառութիւն թուի լինել
անարժան տենչումն պատռոյ:
Եւ սնափառ այնպիսի ոք է, որ
թէ յընթրիս կոչեսցի՝ ջանայ
երթալ առ կոչնատեառնն բազ-
մել ի սեղան: Զորդի իւր ի Դել
փիս առեալ տանի՝ անդ փոքրել
զհերսն. * և հոգայ՝ զի լինիցի
իւր սպասաւոր եթովացի: Եւ
իբրև արծաթոյ մնաս մի ումեք
հատուցանելոց իցէ, ջանայ նորս
և փայլունս տալ:

Եւ ձային զոր առ տնին բու-

* Ի հնումն այս սովորութիւն էր
ամենայն յաթենացւոց՝ յորժամ ման-
կունքն յաբրունս հասանէին: բայց
յետոյ մեծատունք և պարծոտք միայն
առնէին առ սնութի փառասիրութեան:

ծանէ՝ ոչ մոռանայ գնել սանդ-
ղիկ, և առնել վահանակ պը-
ղնձի, զոր առեալ ճային ոս-
տոստիցէ ի սանդուղմն։ Եւ ե-
թէ զարջառ մատուցանիցէ զոհ,
զմորթ խալամոյն եղերովին
հանդէպ մտից տանն կախէ զձո-
զոյ՝ մեծամեծ պսակօք շուրջ
պսակեալ, զի որ մտանենն տես-
ցեն ամենեքեան՝ թէ զարջառ
զենեալ է։ Եւ յետ ընդ աս-
պետսն ի հանդէս հեծանելոյ՝
զայլն ամենայն տայ ցծառայն
տանել ի տուն, և ինքն արկեալ
զամղանն՝ մտրակը յոտս ճեմ
առեալ զգնայ ի հրապարակին։

Եւ իբրև սկնդուկն իւր մե-
ռանիցի, գերեզման շինէ նմա-
և մահարձան կանդնեալ գրէ ի
վերայ՝ Շառաւիդ Մելիտինոյ։
Եւ կախեալ յուխա մանեակ
պղնձի ի մեհենին Ասկղեպեայ՝
պսակօք մաշէ զայն և օծանէ-
զօր ամենայն։

Զանայ հնարի և առ պետա-
կան աւագորերոյն՝ զի խորհըր-
դոց զոհիցն ինքն լիցի ազդարար
առ ժողովուրդն։ և զգեցեալ
պայծառ պատմուձան՝ պսակ ի
գլուխ ելանէ առ նոսա և ասէ.
Ո՞րք աթենացիք, զոհեցաք իշ-
խանքս դիցամօրն. պատարագք
մեր ընդունելի են և բարենը-
շան. և գուք ընկալարուք զբա-
րիս։ Յետ ազգեցուցանելոյ ըղ-
պատգամս զայս՝ երթայ ի տուն
և պատմէ կնոջ իւրում, թէ ո՞ր
պէս առաւել քան զոր կամէր
յաջողեցաւ նմա ամենայն։

Դ և Ե

ՎԱՍՆ ՍՆԱԳԱՌՈՒԹԵԱՆ
ԱՅԼՈՎ, ԿԱՐԳԱԼԻ

Անափառութիւն թուի թէ
անսպատեհ ցանկութիւն է փա-
ռաց: Եւ այնպիսի է մնափառն,
որ թէ ի կոչունս ուրեք հրա-
վիրեսցի՝ փութայ մղի առ հաց-
տուն հուաք բազմել յընթրիան:
Եւ զորդին ի Դելփիս տանի
հարթել զգէսմն, և փշթ մեծ
ունի՝ զի սպասաւոր եթէովպա-
ցի զինի եւր շրջեսցի. և ի տալ
ումեք մնաս ինչ արծաթոյ՝ ուշ
առնէ զնորն տալ:

Եւ թէ զեղն սպատարագ մա-
տուսցէ, զճակատ խալամոյն եղ-
ջերօքն հանդերձ առաջի դրաց
տանն ընդ ցից հանեալ վարսէ,
շուրջ բոլորեալ զնովաւ պսակս
մեծամեծս, զի որոց մտանենն

Երեւելի կայցէ՝ թէ զեղն է զո-
հեալ: Եւ իրու ընդ ասպետսն
ի հանդէս հեծանիցի, ապա այ-
նուչեակ իջեալ յերիւարէն՝ զա-
մենայն ինչ զայլ թողու ի մա-
նուկն գարծուցանել ի տուն,
և զարտամուճան փառացն միսյն
արկեալ զիւրեւ՝ մտրակ յոսս ի
հրապարակսն ձեմի:

Իսկ եթէ սկնդուկն մեռանի-
ցի, շիրիմ կանգնէ նմա և ար-
ձան և գիր ի վերայ, թէ Աղ-
նիւ մելիսինեցի: Եւ յաղագո-
ձային՝ որ ի տանն մնանիցի,
գնէ անդզիկ անմոռաց, և առնէ
ասսպարիկ պղնձի, զի առեալ
զայն ձային վազվազիցէ ընդ
սանդզամատունսն: Եւ նուի-
րեալ օղ պղնձի յասկզեպեան
տաճարին, այնչտփ արկանէ ի նա
պսսկս, մինչև մաշեսցի:

Ստէպ ստէպ սափրէ զհեր-
սըն, զարտամուճան ունի սպիտակ
փայլուն, և զգեստք որ գեռ

պատուականքն իցեն՝ ի բաց
ընկենոււ, և իւղովք անուշիւք օ-
ծանի հանապազօք: Ի հրապա-
րակս՝ զսեղաննաւորօքն գայ, ի
կրթարանն անդ գեգէրի՛ ուր
մանկան ընդ մարզս ելանեն,
և ի աեւլարանս՝ յորժամ խաղը
լինեցին՝ երթայ մօտ առ զօրա-
փառն նստի:

Եւ ոչ մի ինչ յիւր պէտսն ոչ
ստանայ, այլ առ հիւրսն առաքէ
այսր անդր, ի կիւզիկոն շունս
լակոնացիս, և մեղր հիւմիտացի
ի Հռոդոս. և ապա քաջաքա-
ցոցն քարոզէ՛ թէ զայս ինչ և
զայս գործեցի:

Գիտէ և մարդաճիւաղ ի տան
սնուցանել և աղաւնիս սիկելիի-
ցիս, և ստանալ ձանս վթաց վայ-
րի և շիշս բոլորշիս թիւրիացիս
և խեղաթիւր մահակս ի Լակեդե-
մոնէ և սրահակս նկարէնս ան-
կուածոյս ի կերպարանս պարս-
կաց, և գաւիթ ի պէտս ասպա-

րիսի բոնամարտկաց և գնտաձը-
գութեանց. և այսր անգր ցոյցս
առնէ տալ զայն ի սպաս իմաս-
տասիրաց, զինաշարժից և նոււա-
գողաց. և ինքն ապա յետ հան-
դիսիցն ասէ առ այլ ոք վասն
հանեկիսականացն, եթէ Դոցա
ւագդիկ է խաղետղդ:

Գուն գործէ և առ հրամա-
տարս ժողովրդեանն, զի զաղ-
գեցութիւն զոհից ինքն արտո-
ցէ առ ամբոխն. և հանգեր-
ձաւորեալ պայծառ պատմու-
մանաւ՝ պսակազարդ ելանէ տո-
նոսա և ասէ. Արբ աթենացիք,
զոհեցաք նահապետքս զոհս մօրն
աստուածոց, և հաճոյականք են
պատարագքս մեր և բարեգու-
շակը, և դուք ի բարիսն վայե-
լեսջիք: Ապա յետ այսր աղդա-
բարութեան գնայ ի տուն պատ-
մել կնոջ իւրում՝ թէ զիարդ առ
ուաւելովն յաջողեցին նմա կամք
իւր:

Զ

ՎԱՍՆ ԱՄԲԱՐՀԱԽԱՑՈՒԹԵԱՆ

Ամբարհաւաճութիւն անշուշտ
թութ լինել ցոյցք անդոյ բա-
րեաց : Եւ ամբարհաւաճ այն-
պիսին է, որոյ կացեալ ի կիրճ
ծովուն պատմէ եկաց և պանդըխ-
տաց, թէ քանի բաղում են
նորա ինչք ի վերայ ծովու. Ճա-
ռէ և զշահից վաշխի՝ թէ քանի
օն իցեն, և թէ ինչք որչափ ինչ
շահեցաւ և կորոյս . և զայս
այսպէս մեծամեծս կոտորեալ,
առաքէ անդէն զմանուկն առ լո-
մայափոխն առ որում դրամ մի
և եթ կայ նորա:

Եւ առ ուղեկցին պատեհ ա-
ռեալ գիտէ ասել զմանապար-
հայն, թէ որպէս ընդ Աղեք-
սանդրի զինուորեցաւ, և զիարդ
եղե ընդ նմա. և որչափ ակա-

նակուռ բաժակս յաւարի ա-
ռեալ երեր ընդ իւր. և զասիա-
ցւոց ձարտարացն վիճի' թէ քաջ
քան զի ւրոպէացիսն են: Եւ զայս
ամենայն համբաւ զրուցէ ա-
ռանց ի տարաշխարհ ուրեք ի
քաղաքէն եւանելոյ:

Ասէ ևս, թէ գիր հասեալ կայ
նմա յլինդիպատրոսէ, որ պատ-
մէ՝ թէ երրորդ՝ ինքն է մաեալ
ի Մակեդոնիա: Եւ թէ տուաւ
նմա իշխանութիւն առանց մաք-
սի վաճառս փայտից անտի հա-
նելոյ, սակայն ինքն հրաժա-
րեաց զի մի՛ ինչ յումեքէ յա-
չազեցի. զի առ մակեդոնացիսն
առաւել զգաստութիւն պիտօյ է:

Եւ թէ որպէս ի սովի ա-
ռաւել քան զինդ տաղանդ

* Ըստ ոմանց՝ Յերրորդ աւուր կամ
Յերիս աւուրս կամ Երեք աւուրք
են զի մաեալ է: Թէոփրաստ զդէպա
իւրոյ ժամանակին առնու յառակա:

ծախք իւր հաշուկցին՝ վասն չը-
քաւորաց քաղաքացւոցն զպէտ-
սըն մատակարարելոյ. զի զլա-
նալ ումեք ոչ դիտէ: Եւ թէ անծանօթք ոմանք առ նովաւ
իցեն բազմեալ, ստիպէ զմի ի
նոցանեն քուեայս առնուլ հա-
շիւս արկանել, և աճեցուցեալ
զնոսա ցվեց հարեւր առ մնաս,
եղեալ և անուանս իւրաքանչիւր
նոցա ի կեպ, գտանէ տաղանդս
տասն, և զայն ամենայն նպաստ
լինել առէ յիւրմէ ի հանգանակ
սեղանոյ նոցա, և յաւելու թէ
ոչ արկանէ ի համար զվերակա-
ցութիւնս պատերազմիկ նա-
ւացն, և ոչ զայլ ևս հասարա-
կաց պաշտամունս զորս պաշ-
տեաց ձրի:

Մատուցեալ և առ վաճառա-
կանս ընտիր երիւարաց՝ պատ-
ճառի գնել, անտի ի թանգա-
րանսն անցեալ ինդրէ հան-
դերձս երկուց տաղանդաց, և

նարանչի ընդ ծառային՝ թէ ըն-
թէր առանց արծաթց շրջիս զիմ
ինի: Եւ թէ վարձուք ի տան
նակիցէ, իմ հայրենի ապա-
ռանք են, ասէ առ անդէտսն,
և վաճառել կամիմ, զի անձուկ
է ինձ յընդունելութիւն հիւ-
րոց. և թէ կայ առ նմա ջուր
յուրա ի ջրհորոյ աննման, և
պարտէզ ուռճացեալ առատ և
իափուկ բանջարօք, և խոհակեր
հմուտ ի պատրաստութիւն հա-
մադամոց, և թէ տուն նորա
բոք ինւան է, քանիզի լի է զոր-
հանապազ. և թէ բարեկամք
եւր են կարան ծակ, զի ամե-
նոյն բարեզն զոր առնէ՝ ոչ
կարէ ընուլ զնոսա:

Է

ՎԱՍՆ ԱՄԲԱՐՏՅԱՆՈՒԹԵԱՆ

իսկ ամբարտաւանութիւն է
արհամարհել զայլս առ ան-
ձամբ։ Եւ այնպիսի ինչ ոք է
ամբարտաւան, զի որ փութայ
ստիպաւ խօսել ինչ ընդ նմա,
Յետ ընթրեաց եկ, ասէ։ Զվե-
ճըս իրաւախնդրաց դատի ի զգը-
նալ իւրում։ Եթէ յաւագու-
թիւն կոչեսցի, զանպարապու-
թիւն պատճառեալ՝ հրաժարէ։
Ե բարեբարելն ումեք՝ ստիպէ
անմոռաց ունել, ոչ ումեք առ-
նու յանձն ինքնին նախ ընդ ա-
ռաջ գնալ, և վաճառականաց
անդամ իբրև վարձկանաց հրա-
ման տայ գնալ այդուց առ ինքն։

ԶՃանապարհայն յերթալն ըր-
խօսի բնաւ ընդ ումեք յորոց
պատահենն, այլ գլուխ ի վայր

արկեալ գնայ, և ապա գար-
ձեալ կոկողավիզ շրջի, որպէս
և նմա հաճոյ թուեսցի։

Յորժամ ընթրիս տայցէ բա-
րեկամացն՝ չլինի նոցա հացկից,
այլ միում ի հնազանդելոցն պա-
տուէր տայ հոգ տանել նոցա.
և մինչ ուրեք գնալոց իցէ, կա-
րապետ առաջի արձակէ՝ զե-
կուցանել թէ ահա գայ։ Ոչ սօ-
ծանելն, ոչ ի լուանալն և ոչ ի
կերակուր առնուլ թոյլ տայ ու-
մեք մտանել առ նա։

Եւ թէ հաշիւք ընդ ումեք
իցեն, պաշտօնէին հրամայէ ու-
նել զհամարն, և գումար արա-
րեալ գրոշմել ի գիրա յիշատա-
կաց իւրոյ։ Ի նամակսն ոչ գրէ՝
թէ Առնիցես ինձ չնորհս այլ
թէ Կամիմ՝ զի այսպէս լինիցի,
և Առաքեցի առ քեզ՝ առնուլ,
և Զի մի այլազգ ինչ լինիցի, և
թէ Վաղվաղակի ժամ մի յա-
ռաջ։

Բ

ՎԱՍՆ ԳՈՌՈԶՈՒԹԵԱՆ

Գոռազութիւն թուի թէ իցէ
գահասիրութիւն՝ սասարկ հա-
րեալ ի բանակալութիւն։ Եւ
այն է գոռոզ, որ թէ ժողովուրդն
ի խորհուրդ մտանիցէ՝ ընտրել
այլ ևս պաշտօնակիցս իշխանին,
յառաջ անցեալ ցուցանէ՝ թէ
զիարդ արժան է նոյն ինքնա-
կալս լինել, և թէ այլք առան
զոք իշխանակից նմին ի մէջ մա-
տուցեն, ինքն կոյ պնդի՝ թէ
բաւական է մին. և ի հոմերա-
կան տաղիցն զմին միայն պինդ
ունի, զայն եթէ

Զէ բարւոք բազմաց իշխել,
մի ոք ևեթ իշխան լիցի.
իսկ զայլմն ոչ գիտէ։
Իշխել իշխէ և բանս այսպի-
սիս խօսել, թէ Մեղ պարտ է

առանձինն ուրեմք յաղագս այսր
ի խորհուրդ ժողովել, և հեռի
մեկուսի լինել յամբոխէն և ի
հրապարակէս, և որ ի բարձ
աւագութեան հասեալս եմք՝
փոքր մի հանգիստ գտանել։ Եւ
թէ գործիցի ինչ յումեքէ կամ
անպատճիցի, կամ սոցա, ասէ,
կամ մեղ միայն պարտ է մնալ
ի քաղաքիս։

Եւ ելեալ զհասարակ աւուրբ,
և զլօդիկ իւր արկեալ, և կի-
սակառը զհերսն փոքրեալ, և
զեղնդունսն սրբեալ զգուշու-
թեամբ, մղէ վարէ զհանդի-
պեալսն, այսպիսի ինչ ասելով.
Զմարթի այլ ևս շմարթի կալ ի
քաղաքիս յերեսաց շոգմոդ և
քսու բանսարկուաց։

Եւ թէ որպէս անհնարին տա-
ռապի յատեանս ի ձեռաց գա-
տախազից. և թէ զարմանայ ընդ
այնոսիկ՝ որ սպրդին նեղին ոտն-
խէթ լինել ի գործ հասարա-

կաց, թէ զի՞ արդեւք ինդրիցեն. և թէ որպէս ծանր և տաղառուկ է այժմ ամենայն ինչ որոց տնուրէնքն են և մատակարարք. և թէ զիարդ ամաչէ ի ժողովմն՝ յորժամ նուասա ոք և գձուձ առնմա բազմիցի. և յաւելու, Ե՞րե իցէ՝ զի ոդի առնուցումք. զի ահա կորհչիմք ծախիմք ի պաշտամանց աստի և ի կազմութենէ հանդերձանաց նաւաց պատերազմի:

Եւ թէ քանի՛ տտելի՛ է ռասկավարաց ազգ։ Եւ սկզբնապատճառ չարեց քաղաքին զթեսեւս ասէ լեալ, զի նա զերկոտասան քաղաքն ի ժողովուրդ խառնեալ՝ քակեաց զթագաւորութիւն. և կրեաց զարժանն, զի նախ ինքն կորեաւ ի նոցանէն։ Եւ այլ ինչ այսպիսի խօսի առհերսն և առ համարաց քաղացիս՝ որ ի նոյնս միամտեալք իցեն։

Թ

ՎԱՍՆ ՎԻՍՈՒԹԵԱՆ

Վիսութիւն է դաժանութիւն բարուց ի բանս. և վես այն՝ որ եթէ հարցանիցի թէ մւը է այս անուն, Զի՞ կայ իմ, ասէ, և նորա. և թէ խօսիցի ոք ընդ նմա, չտայ պատասխանի։ Եւ ի փառառելն ինչ չասէ գնելեացն քանոյ տայցէ, այլ նոյզ և ինդիք առնէ թէ զինչ դատիցէ։ Եւ որ մեծարիցեն զնա և առաքիցեն ինչ ի տօնս, ասէ ցնոսս, թէ և ճաշակիցէ իսկ ոչ յընծայից։

Ոչ ներէ ամենևին՝ եթէ ոք յանկարծ ակամայ խթիցէ զնա կամ կոխեսցէ ի վերայ նորա։ Եւ բարեկամի՝ որ ի հանգանակ նպաստ լինել ժամանակ, Ոչ ունիմ, ասէ, տալ. ապա առեալ տանի

ինչ, Եւ այս ևս արծաթ, ասէ,
ահա գնայ ի կորուստ:

Եւ թէ գթիցէ յուղով, և
քարին ևս անէծս և նզովս կար-
դայ, Յանձն ումեք չառնու սպա-
սել օգուտ ժամս. ոչ երգել կա-
մի յերախանս, ոչ քան արտա-
սանել և ոչ ի պարու անցանել.
և զառ Աստուած աղօթսն գլո-
խովին կարօղ է ապախտ առնել:

Ժ

ՎԱՍՆ ԲՐՏՈՒԹԵԱՆ

Բրտութիւն թուի լինել ար-
դիտութիւն պատշաճից: Եւ այն
պիսի է բիրա, զի յետ ըմպելոյ
խառնակ ինչ զգայուսա գեղս՝
անխիղձ ելանէ ի հրապարակ ա-
տենի, և զեւզս ոչ քան զծոթ-
րին անուշահոտ ասէ լինել, և
մեծ քան զոտնն ագանի կօշիկո,
և մեծագոշ բարբառի:

Ընդ սիրելիս և ընդ ընտանիսն
ըլստահի, և զծաւայսն իւր առ-
նու խորհրդակիցս իրաց մեծա-
մեծաց, և յունկն վարձկանաց
իւրոց մշակաց ագարակին հեղու-
զամենայն իրս ատենի ժողովը-
դեան: ի նստելն հանգրիձէ ըլզ-
հանգերձսն ի վեր քան զծունկսն
մինչեւ ծանակ կալոյ:

Զիք ինչ ընդ որ զարմասցի

կամ սքանչասցի. խակ եթէ եզն
կամ էշ կամ քօշ ի փողոցի տե-
սանիցէ, զկայ տռեալ պշուցեալ
նկատէ: Ոչ խարէ առնուլ ինչ
ի մառանէ և ուտել և ի վերայ
ըմբէլ զանապակն. և ջանայ
թաքչէլ ի հացարար կնոշէն, թէ-
պէտ և ընդ նմա խակ երթեալ
աղայ զպէտաս իւր և զորոց ի
տանն իցեն ամենեցուն:

Ի ձաշելն՝ միանդամայն և գրաս-
տուցն խոտ արկանէ, և ի բա-
խել գրանն՝ ինքն տայ ձայն ի
ներքուստ, և առ ինքն կոչեալ
զշունն և բուռն հարեալ զյուկէն.
Այ է ատ, ասէ, պահապան տե-
ղոյս և տանս և բնակչաց սո-
րա: Եթէ յումեքէ արծաթ առ-
նուցու, ընտրէ զգբամնն, և խո-
տեալ ընկենու իբրև թեթևս և
տժգոյնս, և այլս ընդ այնր փո-
խանակէ: Եթէ ումեք զարօր
տռեալ իցէ յանօթ, կամ ըդ-
սակառի կամ զմանդաղ կամ

զպարկ, ի աքնութեան գիշերին
զայն ածէ զմատւ: . . .

Ի քաղաքն ելեալ հարցանէ ո-
րում հանդիպին, թէ քանոյ ե-
ցեն հանդերձք մաշկեղէնք և տ-
պուխտ ձկան, և թէ այսօր իցէ
ամսադլուի վաճառոց. և անդէն
զնովիմբ ածէ, թէ կամի տա-
վարսավիրայ գնալ վիրալ զհերմն.
և ընդ նոյն ձանապարհ մատու-
ցեալ՝ առնու տանի յԱրքիա-
սայ * ձկունս ապիստեալս ։ ի
բազանիս երդէ, զկօշիկսն խար-
խալեալս ընկեռակապ պնդէ, կամ
կարկատանս ի վերայ կարկա-
տանաց արկանէ, և ասէ, թէ
Ոչինչ ընդհատ կարծր են քան
զեղջեւր:

* Նպարավաճառ ծանօթ ժամանա-
կին:

ԺԱ.

ՎԱՍՆ ԶԱԶՅՈՒԹԵԱՆ

Զաղբութիւն է անխնամ թուղուլ զմարմինն մինչև զզուելի լինելոյ: Եւ զազիք այն ինչ ոք է, որ քոսոտ բորսոտ և որդիւնոտ և վարազացեալ եզնգամբբ շըջի այսր անդր. և զայն ամենայն հայրենական ախտոս ասէ լինել, զի նոքիմբբ և հայրն էր դդածեալ և հաւն. վասն որոյ և ոչ դիւրին ինչ իցէ խառնել ումեք յազդ իւրեանց:

Իցեն արգեւրք և խոզք և կեղք ի խռչակունս նորա և կոձիձք ի մատունսն, զորս անդարման թողու՝ զի զայրանցին: Անութք են նորա գաղանայինք և թաւամազք քաջ ի բաց մինչև ցկէս կողիցն և անդր ևս մացառախիտ խողանացեալ ատամունք սեաւք

և մեցոտք, ժանդատեսիլք և զազրաթորմիք, և այլ ինչ այսպիսի բազում:

Խնչէ ի ձորձսն, յուտելն՝ իւօսել առնու թռալիբ՝ և թափէի բերանոյն, և յըմպելն՝ զգոյշաէ յերեսս այլոց, և անկեալ ի բաստեռունսն անդէն յետ ընթրեայն ննջէ ընդ կնոջ իւրումն ի բազանիս՝ հոտեալ իւզով օծանի, և խսկոյն առնու զհանդերձն: Հապիկս խոշորս և բաճկոնս հնոտիս և ազաելիս՝ զայն արկեալ զանձամբ, ելանէ ի հրապարակ:

Եւ ի հացին ձառ արկեալ պատմէ, թէ մրպէս կոճ վրացի արբեալ ի վերտուստ և ի ներքուստ ժայթքեալ մաքրիցի, և զի ի նստածս իւր թխագոյն է մազձն քան զարգանակն՝ որ անդի վերայ սեղանոյն: Եւ թէ թքանել կամիցի զականովի ի մատուակ անդր ձգէ զխուիսն:

ԺԲ

ՎԱՄՆ ԼՐԲՈՒԹԵԱՆ

Ու գժուարին ինչ է սահմանել զլրբութիւն, քանդի խայտառակ և նշաւակելի խեղկատակութիւն է : Եւ այսպիսի է վրբն, որ եթէ կանանց պարկեշտից հանդիպեսցի՝ հոլանեալ ցուցանիցէ զառականնուն : Ի լոել այլոց ի թատերս՝ ինքն ծափս հարկանէ . և որոց այլը հեշտաբար կան ի զնին՝ չչէ ի վերայ նոցա . և ի հանդարտել տեսարանին՝ վիզ ամբարձեալ զդայուս արձակէ, զիզբազմականն յինքն դարձուսցէ :

Ի բազմամբոխ հրապարակի մատուցեալ կացեալ առ կաղինս կամ ինձորս և առ այլ միրգս՝ ուտէ և խօսի ընդ վաճառողին, կոչէ յանուանէ զայս ոք և զայն

յանցաւորացն՝ որոց չէ ծանօթ . և եթէ ի ճեպի զոք ուրեք տեսանանիցէ, բռնադատէ մնալ : Եւ որ ի մեծի ոք դատաստանի ի պարտութիւն մատնեալ գնայցէ յատենէն, ընդ առաջ երթեալ խնդակից նմա լինի ընդ հենդն :

Եւ իբրև մայրն առ հաւահարց ելանիցէ, հայհոյէ . և լուի լու ընտանեացն իշխու հարցանել . Ասա մայրիկ, ո՞ր այն օր էր յորում երկնեցեր զիս և ծնար . և յարէ ի նոյն . Ո՛րպէս քաղցր է . և որ յերկոցունց յայցանէ անձաշակն իցէ չմարթի ստանալ մարդ * :

Յաղօթս կամ ի նուելսն ընդայլս մատուցանել, ընկենու ի

* Աթուլիւն ընադրին կարծիս տայ իսանզարանաց . քննիչք իմանան ասել, թէ բաղցր և դառն յառաջն քան զմնունդ, և առանց երկուցդ չիք որդէժնութիւն :

ձեռաց զսկահն, և որպէս թէ
հրաշանշան ինչ գործ գործեալ՝
զքրքիլ բառնայ: իբրև փողով
նուագիցէ յերախանս, ինքն ին-
քեան միայն ծափ զծափի հար-
կանէ, ցուցս առեալ մրմնչէ, և
սասահ փողար վարձակին, թէ
զի՞ չլուս իսկ և իսկ մինչ եւս
երդիցեմ:

Անձամբ ելանէ գնել պատ-
րաստել զհանգերձանս կերա-
րոյն, սակ արկանէ սրնգահա-
երգեցիկ կանանց գալ ժողովն
ի տուն, և ցուցանէ որոց պա-
տահենն զհանգերձեալ համա-
գամսն և հրաւիրէ զնոսա ի ճա-
և կացեալ առ խանութս վար-
սավիրայից և իւղեփեցաց զրու-
ցէ, թէ գինարբուք մեծ են առ
իս այսօր:

Եւ յընդունելութեան կո-
նոցն ցուցանէ հացակցին՝ թէ
ով այն ոք հացկատակ իւր իցէ:
Եւ ի նուագս ուրախութեան

եակին հրաւեր կարդալով ա-
ռէ. Կազմ և պատրաստ է աւա-
սի զուարթարարն ամենեցուն
որ անդ իցեն. և զայն ևս եթէ
հրամայիցեն, առ գուրս կայ մա-
նուկն ի բողարածէն՝ ածել և
շնա, զի լուիցուք ամենեթեան
զամանութեան նորա և զուար-
թացուք:

ԺԳ

ՎԱՄՆ ՑՈՓՈՒԹԵԱՆ

Ցոփութիւն է սովորութեամբ
դործել կամ խօսել զանպա-
տեհանն: Եւ ցոփն վաղվաղուկ է
յերգնուլ, և ի չարահամբաւելն
և ի թշնամանել անփոյթ, բա-
րուք գուեհիկ և խենեշ և յա-
մենայնի ձեռներէց: Կարօղ է
և ի լրջաց անդամ և առանց գի-
մակի կաքաւս անաւակութեան
կաքաւել ընդ պարս կատակա-
գուսան խաղակաց: Եւ ի խաղս
աճպարարաց՝ մատուցեալ առ
մի մի իւրաքանչեւը ժողովէ զպը-
ղինձ հանդիսականացն. և որ ա-
ռանց յետկարի իցեն և ձրի տես-
լեանցն ի զնին կալ ժաիցին,
մարտնչի ընդ նոսա:

Պանդոկապետ լինի, այլ և
բողաբոյծ, այլ և մաքսաւոր.

և չեք յապիրատ գործոց յորմէ
պատկառեալ խորչիցի. այլ քա-
րող կարդայ, խոհակերէ, ու-
լունս խաղայ, շրջի ժողովէ տուրս
աստուածոց, գող ըմբռնի, և
քան ի տուն իւր առաւել ի
բանստ բնակէ:

Սորին սակի թուին լինել և
այնոքիկ, որ կուտեալ շուրջա-
նակի զամբոխ հրապարակին և
ձայն արկեալ ուժգին և կեր-
կերեալ բարբառով ձառատիցեն
առ նսսա և կագիցին, և ի միջի
անդ կեսք գայցեն և կեսք գնայ-
ցեն զանց զբանիւքն արարեալ.
իսկ նոքա արձանացեալ ի տե-
ղողն՝ ոմանց զսկեղըն ձառիցն
պատմիցեն, կիաոց վանդս ինչ և
այլոց մասն մի ևեթ, չհամա-
րեալ արժանի տեսիլ առնել զան-
ցամութիւն իւրեանց, բայց
յորժամ ամենաժողովկացուրդք
լինիցին:

Ի դատաստանս է զի ի ջա-

տագովել կայ անձին ամբաստա-
նութեանց , և զի գատախազ
մտանէ այլոց , և յորոց յուրաստ
կայ երդմամբ , և և ուր եկեալ
հասեալ յանդիման լինի գլրոց
վճռագումար ի ծոցի և խուրձ
խուրձ տոմսակաց ի ձեռին :

Զամաշէ կալ ի գլուխ գնդի
փերեզակաց , արծաթ առ ձեռն
տայ նոցա նոյն հետայն ի վաշ-
խի , և աւուրն դանկ և կէս ի
դրամէ արկանէ նոցա տոկոսին .
և ապա ի խոչանոցս երթեւեկէ ,
առ ձկնավաճառս և առ խու-
նաւագս , և զլաշխս վաճառա-
շահին ի կլափն ժողովէ :

Դժուհիք են , և բերանք նոցա
անկապ անարդել ի լուտանս .
պուստախօսք և կարկաչոտք ,
մինչեւ հրապարակը և գործա-
րանք անդրէն ընդդէմ հնչեն նո-
ցա արձագանդ :

ԺԴ

ՎԱՄՆ ԶԱՐԱՅԻՐՈՒԹԵԱՆ

Զարասիրութիւն ցանկու-
թիւն է չարեաց , և չարասէր
այն ոք՝ որ յաճախէ առ գա-
տապարտեալս և պարաւորս
ատենի ժողովուդեան , կարծեալ
թէ զնոսա զիւրե ած ելով՝ մար-
թուչ ևս և ահաւորագոյն լինի-
ցի : Եւ զաւաքինեացն ասէ . Ե-
հէ , իցեն որպէս զիարդ ինչ մար-
թի . և թէ , Զիք ոք բարի , և
նոյն են ամենեքեան . և ի սուտ
հանէ թէ լաւ ոք ուրեք իցէ ,
և ազատ զշարն միայն ասէ :

Եթէ ոք զշարէ ինչ հարցա-
նիցէ զնա , վկայէ՝ թէ զայլն ա-
մենայն արդար ասեն զնմանէ մար-
դիկ , բայց է ինչ զոր անգիտա-
նան . զի այլ լաւաբարոյ է նա ,
ընդդնդերասէր և բարիանուն ,

և երկայնէ ձառս զնմանէ, որպէս չգտեալ ուրեք այր յաջողակ քան զնաւ:

Եթէ ի հրապարակ ոք ժողովրդեան ի գատ մատնեալ իցէ կամ դատափետեալ յատենի, և նոցա թեր ելանէ. և իշխէ երթալ նստել առ նոքօք և ասել, թէ ոչ արժան է զայրն դատել, այլ զգործն. և զանձնէ ասէ՝ թէ իցէ շուն ժողովրդեանն՝ զգուշանալ յանիրաւաց. և զի ոչ զոք դատնիցեմք հոգաբարձող իրաց աշխարհին, Եթէ զայսպիսիսին անտես առնիցեմք:

Նա՛ և անզգամաց անդամը ժապրհի թիկունս տալ, և յատեանս դարանակալ նստի զօրավիրն գործոց չարաց. և ի դատելն զդատաստան՝ զամենայն զբանս ոսոխաց ի թեւը միտս տանի:

Համայն ասացեալ, չարասիրութիւն քոյր է չարութեան. և անսուտ է առակն, Նման առ նմանն երթայ:

Անշնորհութիւն սահմանաւառեալ է վարք, որ թէպէս և առանց վնասու, սակայն նեղութիւն հասուցանէ: Եւ այն է անշնորհ, որ զայն ինչ նիրհէալն մտեալ զարթուցանէ, զի ընդնմա զբանիւք անկանիցի. և որ ի չու կազմեալքն իցեն ընդիւր՝ արգելու, և մատուցեալ թափանձեցուցանէ անսալ՝ մինչ ինքն վայրիկ մի ճեմ առնուցու:

Եւ առեալ ի ստընտուէն ըզմանուկն և ինքնին ծամեալ ինչ ջամբէ նմա, և յաւաչս կակուզս պատճառի, և խորամանդադոյն քան զպապն ձայնէ զնաւ: Ի հացեկրոյթս զրուցէ, թէ զվրացի կոճ առեալ դեղ որպէս ի վեր և ի վայր ժահը արձակիցի, և

զի սեագոյն ի թրբածս իւր է
մաղձն քան զարդանակն՝ որ կայ
ի սեղանի անդ :

Եւ յականջս իսկ ընդոծնացն
յանդդնի հարցանել, Ազէ մայ-
րիկ տսա՛, յորժամ երկնեցերն
զիս և ծնար՝ զի՞նչ այն օր էր.
և զնովիմբ ածեպլ ասէ. Զիմարդ
քաղցր է, և առանց ընդ երկուցն
փորձ անցանելոյ չիք մարդ ստա-
նալ:

Պարծի ջուր ցուրտ ի գբոյ
ունել ի տանն, և պարտէլ ա-
ռատաբեր մատաղ խաւարտից,
և խահամոք անուշարար կերա-
կրոց, և թէ տուն իւր իբրև օ-
թեան բաց է յասպնջականու-
թիւն ամենեցուն, վասն զի խըռ-
նեալ է յամենայն ժամ. և ծակ
կարասն՝ են սիրելիք իւր, զի
բնաւ բարերարութեամբ իւ-
րովք չկարէ ցուցանել զնոսա;
Եւ իրու ընթրիս ումեք տայցէ,
նշաւակէ հացակցին զպատաւա-

բոյծ հացկատակ իւր՝ թէ ով ոք
է: Եւ ի նոււագս խրախութեան
խնջոյից ձայն տալով ամենեցուն,
ասէ թէ մօտ առ ոտս կայ անդ
զուարթարարն խրախանացե-
լոցն, և եթէ և զայն տացեն հրա-
ման՝ աւասիկ հասեալ անդէն առ
կւան կայ մանուկ բողաւագին,
երթալ ածել մեզ՝ զի առ հասա-
րակ հեշտացուք ի ձայն նու-
րա:

ԺԶ

ՎԱՍՆ ԱՆԱՄԾՈԹՈՒԹԵՍԽՆ

իսկ անամօթութիւն է, զի ընդ սահմանաւ արկցուք, ան փոյթ առնել զիտաւ վասն զօշաքաղութեան։ Զի անամօթ է, որ զոր ինքն զրկեաց յառաջաւ գոյն՝ գնացեալ ապա խնդրէ փոխ ի նմանէ։ Եւ իրբե դից զոհիցէ, զմիս զոհին յաղեալ շտեմարանէ, և ինքն երթեալ առ այլում ճաշէ։ և կոչեցեալ զսպասաւոր իւր, և առեալ հաց և միս ի սեղանոյ անտի՝ տայ ցնա և ասէ լու ի լու ամենեցուն։ Երթ և դու, սիրելի, խրախ լեր։

Զմոյ երթեալ, յիշեցուցանէ մսավաճառին զոր երբեմն չնորհ ինչ արարեալ իցէ նմա, և առ կշռոյն կացեալ, միս ըստ կարի և կամ թէ ոչ գոնէ ոսկր ինչ

ընկենու ի նժարն, և եթէ տացի նմա թոյլ ուրախ լինի, ապ' եթէ ոչ՝ շորթեալ ի սեղանոյն կոտորսինչ ընդերաց և ժպտելով մեկնի։

Եթէ իւրոց հիւրոցն տեղի ի դիտակս տեսլարանաց խաղուց վարձիցի, ինքն ևս ընդ նոսա ի տեսլիմն վայելէ առանց զիւր սակն տալոյ, վաղիւ և զորդիս իւր և զգաստիրակ նոցա առեալ ածէ անդր։ Եւ որ ազնիւ ինչ ոք գնոց առեալ տանիցի, թախանձէ հանել և ինքեան անտի մասն։

Յայլոյ տուն երթեալ փոխառնու գարի, երբեմն և յարդ, և որ տայցեննն ստիպէ զնոսա բառնալ տանել զայն ամենայն մինչեւ ի տուն իւր։ Զամաչէ և ի բազանիս ձրի մտանել կալ առ սանսն, և միսեալ զիսյն, մինչ գեռ բաղանեպանն բողոք բառնայցէ, հեղու զանձամբ զջուրն և ասէ, թէ Ահա լուացայ, և քեզ ոչ ինչ է տատ չնորհ։ Եւ ելեալ գնայ կորնչի։

ԺԵ

ՎԱՍՆ ԶՕՇԱԲԻՑԴՈՒԹԵԱՆ

Զօշաբաղութիւն է ժողովել
շահս անպատէհս։ Եւ այնպիսի
է զօշաբաղն, որ եթէ հաց տայ-
ցէ՝ չգնէ ի սեղան բաւական
նկանակս. հեւը՝ որ առ նմա ի-
ջևանեալիցէ՝ փոխ առնուի նմա-
նէ. ի բաշխելն բաժին յընթ-
րեկերս. Արժան է, ասէ, կրկին
մասունս տալ մատակարարին.
և անդէն առեալ գնէ առաջի իւր։
Գինի եթէ վաճառեացէ, բարե-
կամին ևս ջրախառն տայ։ ի
թատրն յայնժամ երթայ հան-
գերձ որդւովք, յորժամ հանդի-
սադիրքն ձրի թողոցուցանիցեն։
Իբրև հրեշտակութեամբ ու-
րեք ընդ այլս առաբիցի յիշխա-
նութենէն, զթոշակ ճանապար-
հին տուեալ նմա ի քալաքէն՝ ի

տան թողու, և յուղեկցացն փոխ
մուրանայ։ Ծառային իւրում
բառնայ բեռն ի վեր քան զկար,
և սակաւ քան զայլոցն տայ նմա
զպէտան։ Եւ որ ինչ նմա ան-
կանի տալ հիւրոյթ ասպնջակա-
նին իւրում, զայն ևս ի նոցա-
նէն՝ ինդրեալ՝ երթայ փաճառէ։

Յօծանելն ի բաղանիս, Ճա-
հահոտ է եւդդ զոր գնեցեր ինձ,
տսե ցմանուկն, և օտարին իւ-
զով օծանի։ Թէ ոք յընդոծնացն
դասանիցէ պղինձ ի փողոցի, ը-
պատկառէ հայցել և իւր ման,
ասելով՝ թէ Հերմէս հասարա-
կաց է * *։ Զպարեգօտ իւր տու-
եալ ի լուացումն, երթայ առնու-
յանօթ ի ծանօթիցն, և զայն ա-
գանի յերկարեալ զբացում ա-
ւուրս մինչեւ անդրէն յեսո պա-
հանեցացի։ Եւ այլս այսպիսիս :

* Յուղեկցաց անտի:
** Հերմէս զիք եին և վաճառա-
կանաց և դողոց։

Ճշգաչափ և բարձրայատակ աշ-
մանով ինքնին բաժանէ ընտա-
նեացն զպէտան, քաջ հարթելով
զերեսս թաթաղուն անօթոյն :
Դիւրագին առնու ի բարեկա-
մէն, և երթայ վաճառէ մեծա-
գնիս ի հասուցանելն զպարտո
բառասուն մնասուց՝ խորէ դրա-
մըս չորս.

Եթէ առ հիւանդութեան չը-
գնայցեն մանկունք իւր աւուրս
ինչ ի գորոց, ըստ նմին չափոյ
հատանէ զվարձն. և զԱնթես-
տիրիսն ամիսն ողջոյն չըդէ զնո-
սա յուսումն վասն տեսարանաց
թատերցն յաճախելոյ, որպէս
զի մի զվարձս ամսոյն բովան-
դակ տայցէ: Յորժամ ի ծա-
ռայէն հստ առնուցու, ինմանէ
տուգանէ զառյժս դրամոցն. ըզ-
նոյն առնէ և յորժամ ի գոր-
ծակալէն համարս առնուցու:

Իբրի կոչունս առնիցէ երդակէ
յացն, ի միջոյ անտի կերակրոյն

բաժին խնդրէ որդւոց իւրոց + և
զկէսս անդամ բողկից՝ զկոտո-
րոց սեղանոյն ընդ գրով արկա-
նէ, զի մի՛ սպասահարկու մանկը-
տին գողանայցէ: Ուզեկից լեալ
ուրեք ընդ ծանօթս իւր, նոյցա
ծառայիւրքն պաշտի ի պէտան, և
զիւրն ի վարձու տայ յայնժամ
հեռի ուրեք, և զդինսն ոչ բերէ
ի ծախս հասարակաց:

Եթէ հանգանակք ի տան նո-
րա լինիցին, ի համարի առնէ և
զոր յիւրմէ անտի արկանիցէ
փայտ, պոյտն, աղ, քացախ և
ձեթ ի ձրագ: Յորժամ ի սի-
րելեացն ոք՝ իւր կամ դստերն
հարսանիս առնիցէ, աւուրբբ ինչ
յառաջ աճապարէ խոյս տայ ի
քաղաքէն, զի մի՛ և ինքն օժտա-
բեր ընծայատար լինիցի: Ի ծա-
նօթիցն զայն ինչ իրս առնու ի
փոխ՝ որ քնաւ և չպահանջիցին
յետս, և եթէ գարձուցէ ևս՝
ոչ ումեք փոյթ լինիցի առնուլ:

ԺԼ

ՎԱՍՆ ԱԳԱՀՈՒԹԵԱՆ

Ագահութիւն է չդիտել զայտ
տիւ անձին՝ որ ծախիւթն լինի-
ցի։ Եւ այնպիսի ինչ ոք է ա-
գահն, որ զի թէ յողբերգ պակ-
սըն յաղթանակ տարցի՝ պատկ
փայտեղէն նուիրէ Սպանդարյա-
մետին, մակագրեալ յանուն իւր-
իբրև տուրք մատուսցին ի ժո-
ղովս ժողովրդեան, ինքն լուս
կայ, և կամ յարուցեալ ի միջ
անտի զանձն արտաքս ճողոպր-
ի հարսանիս գտարեն՝ զայտ

* Ողբերգակ քերզողացն մըցանակ
յաղթութեան՝ մեծ եր յոյժ ի փառա-
հելենացւոց, և գոհութեան նույրա-
տային սպանդարամետական զիցն,
յորոյ ի պտտիւ տօնիցն կատալ է այն հանդէսք թատերաց։

Նայն միս զոհին, բաց ի նուի-
րականացն, տարեալ վաճառէ.
և չարսանեացն սպասաւորս ի
գործու ունի առանց ռոճաց։
իսան նաւապետ կայեալ ի պա-
տերազմի, զգեկավարին անկո-
վանն այց արկանել իւր ի պաղ-
պաջունան, և զիւրսն ինայէ։

Յորժամ աւուրք ընծայաբե-
րութեան իցեն մօնկանց առ
վարժապետն, շառաքէ զնոսս
առ նա, պատճառելով թէ իսօթ-
են, զի մի՛ նպաստ ի հանդա-
նակն լինիցին։ Եւ ի վաճառա-
ցէ տուեալ պաշարս, միս և
խուարաս, ինքնին յանթի հա-
րեալ տանի։ Եւ եթէ զպատ-
ճանանի ի լուսաց տայցէ, ի
ան նստի։ Եւ իբրև ազդ լինի-
ց, նմա՞ թէ բարեկամն հանդա-
նակ ժողովիցէ, յառաջագոյն
լուշացեալ խոտորի ի նմանէ
հանապարհայն, և երկայն շըլա-
ռու գնայ մատնէ ի տուն իւր։

կնոջ իւրում, որ և պռոյդ
մեծ իցէ բերեալ նմա, ոչ առնու
գնածոյ նաժիշաս, այլ մանկիկ
մի արբանեակ ի վարձու ունի
նմա ի պէտս՝ յորժամ՝ ի կա-
նանցէն ի գուրս ելանիցէ։ Յա-
րուցեալ ընդ այդն ինքն ածէ
աւել տանն և զմահիճնն յար-
դարէ։ Եթէ նստել ուրեք հա-
սանիցէ, բազմական արկանէ իւր
զգրգլեակն՝ զոր զգեցեալն է։

* Զի մի կալի իւր պաշտօնեայ
բազմոցակիր, որպէս օրէն էր մեծա-
տանց։ Յոյնն առ յոյժ համառու-
թեանն մոայլ ունի մարթ է ևս թարդ
մանել, «Ի նստելն՝ խորշաքաղ ի մի
կողմ պարուրէ զգրգլեակն՝ զոր զգե-
ցեալ է»։ զի մի մաշեսի կամ աղ-
տեղասիլ։

ԺԹ

ՎԱՍՆ ԿԾԾՈՒԹԵԱՆ

Կածութիւն է յանդէպս խը-
նայել և ճշգել զծախս և և կծծի-
է, որ և յետ ամսոյ չգանդա-
ղեալ ելեալ գնայ ի տուն պար-
տապանին պահանել զկէս դանկ
իւր ի միաժողով ձաշկերոյթս
տոհմայնոց՝ թուէ զբաժակս իւ-
րաքանչիւր զոր ըմպէն, և նուազ
բան զամենայն հացակցացն հա-
նէ նուէրս Արտեմեայ։

* Յամենայն սեղանս այս օրէն էր,
հանել երախայրին կամ նուէրս քա-
ւութեան զիցն Դեմետրի և Սպան-
դարամետին։ իսկ ի ճաշս տոհմայ-
նոց, որ էր երիր մասն ցեղի, Ար-
տեմեայ նուէրք լինէին։ որպէս և
յարութեան չափսն հասանել ման-
կանց՝ սմա հանեալ զոհս և զհերսն
կտրեալ, այնպէս ի տոհմն խառնէին։

Որչափ և գիւրագին ինչ ոք
հաշուլիցի գնեալը նա տակաւին
Շատ է, ասէ, շատ: Եթէ ծաւ
ռայն պոյտն կամ պուտնարդ
բեկանիցէ, ի սոճէն նորո տու-
ժէ: Եթէ յանկարծ բնիոն մի
տնկեալ ի կնոշէն կորնչիցի, վեր
ի վայր հարեալ վրդովէ զամե-
նայն կահս տանն և զմահիձն և
զարկեղս, և ընդ տմենայն խորչս
և ծածուկս խիլ արկեալ որոնէ:
Իբրև վաճառիցէ ինչ, այնքանոյ
տայ՝ զի մի ինչ շահեսցի գնողն:

Չտայ թոյլ և ոչ թուղ մի
ուաել ի պարտիզէ իւրմէ, ոչ
ընդ ադարակ իւր անցանել և ոչ
ձէթ մի կամ արմաւ ի գետին
անկելոյն բառեալ: Ելանէ շրջի
զօր տմենայն այց և խնդիր առ-
նել իւրոց սահմանացն ցանդոց՝
Եթէ անխախուտ կայցէն: Ոչ
ինչ խղճէ օր ի յօր տռնել զհա-
տուցումն պարտուցն, և ի վաշ-
իցն շարիատս պահանջէ:

Եթէ խրախունս ժողովրդա-
կանացն առնիցէ, զիսորտիկմն
մանր մանր կոտորիւալ՝ այնպէս
մատուցանէ ի սեղան: Իբրև զու-
տեսուէ ելանիցէ, առանց ինչ
ստանալոյ գտունայ ի տուն: Պա-
տուեր առյ կնոշ իւրում մի
վատնել զազ, մի զպարոյգ, մի
զշաման, մի զզուիրակ, մի զաշ-
ախպս. մի զթեռս և մի զա-
թերս. զի այդ մանունքդ, ասէ,
մեծ լինին ի գլուխս տարւոյն:

Համայն ասել, որ ժլատեռիշան
իցեն, զնոցա և զդանձանակն է
աեսանել ճճեկերս բորբոսեալս,
և զբանալիսն ժանդահարս, և
զնոսսա գլխովին՝ զի զգենուն ըստ
կարի հանդերձս նեզս և կարճս,
ի փոքրիկ և ի գոյզն որուակէ լի-
ուլի օծանին, գերծուն մինչեւ
ցմորթ մարմնոյն*, և զմիջաւուրբ

* իմա, այնպէս տան քերթել՝ զի
մի ստէպ վարսավիրայի կարօտա-

բոկանան։ Եւ առ թափիչոն եր
թեալ գուն գործեն՝ զի ձորձ
իւրեանց ընդ բազում կաւ ե-
կեսցէ, սրակս զի մի ասկա փու-
թով աղտեղասցի։

թին։ Եւ ի ջնուցանել արեու բո-
կանան՝ զի մի օդք ոտիցն հնասցին։

Ի

ՎԱՍՆ ԿԱՍԿԱԾՈՒԹԵԱՆ

Կասկածոտութիւն է կարծիք
իւսոու յամենեցունց։ Եւ այն
ոք է կասկածոու, որոյ առաքեալ
զմանուկն ի գնել զպէտան, դար-
ձեալ այլ ծառայ զկնի արձակէ,
լրաեսել թէ քանոյ առնուցու։
Յուզի ուրեք ինքն բառնայ զար-
ծաթն, և վտաւանէ ի վտաւան
նստեալ համարի։

Ի մահիձն հարցանէ զկին
իւր, եթէ աղխեա՞լ իցէ զարկոն
և կնքեալ զտապանակն, և նիդ
դրաց գաւթին արկեա՞լ իցէ։ և
թէպէտ նա այժ ասիցէ, այլ տա-
կաւին ինքն իսկ յարուցեալ յան-
կողնոյն մերկ և բոկ, ճրագ լու-
ցեալ, չուրչ գայ տեսանել զայն
ամենայն, և այնպէս հազիւ հա-
զիւ ի քուն մտանէ։
Ի փոխառուաց իւրոց հան-

իԱ.

ՎԱՍՆ ՏՐՏՆԶՈՏՈՒԹԵԱՆ

Տրտնշոտութիւն է ըստասանել ինչ և տուրս բարեաց։ Եւ նա է տրանջոտ, որ եթէ բարեկամն իւր բաժին տայցէ տանել առ նա ի կոչնոցն, քրթմնէ առ նուիրաբերն, Յաշաղեցեր յինէն զթանդ և զգինեակդ, և չեղաք արժանի ընթրեացդ ընդ հրաւիրեալսն։ Եւ առ համբոյրս տարփաւորի, Զարմանամ, ասէ, եթէ ոչ սերտիւ սիրեցէս։ Եւ Գիայ ցաննու՝ ոչ զի արձրեէն, այլ զի անագան։

Բատ բախտի քսակ լի գտեալ յուղւոջ, Եւ զի՞ է, ասէ, ոչ երբեք գանձ գտի։ Եթէ պատռական ծառայի գինս հատանիցէ, յետ թախանձանօք պարտաւեցուցանելոյ զվաճառողն,

գերձ վկայիւցն երթայ ինդրել զվաշխան, զի յուրասատ լինել մի՛ կարասցէն։ Զձորձս իւր չհամարձակի տալ թափչի՝ որ ճարտարագոյնն իցէ, այլ որում երաշխաւոր հաւատարիմ կայցէ։ Եւ յորժամ գայցէ ոք ինդրել սպասս ոսկեոյ և արծաթոյ, բազում այն է զի չայց. իսկ եթէ ընտանի ոք իցէ և կարեոր, գրեթէ ի բոլս փորձեալ և կշռեալ և երաշխաւոր ևս գողցես առեալ, այնպէս հազիւ ուրեմն այց յանօթ։

Սպասաւոր՝ որ ընդ նմա շրջելոց իցէ ի քաղաքին, պատռութրէ նմա առաջի իւր գնալ և մի զինի, զգուշացեալ՝ թէ գուցէ զմանապարհայն վախիցէ ի նմանէ։ Եւ որ գնոց առնուցուն ինչ ի նմանէ և ասիցէն. Գրեալ քանի ինչ պարտիմս, զի չժամանեմ առաքեալ զարծաթգ, Անհոգ լեր, ասէ, զի թէ և ժամանեցէս, սակայն ես եկից զինի քո։

Զարմանք են, ասէ, այդքան տ-
նարդ գինքդ, եթէ անարատ ինչ
ոք էր դա: Եւ որ աւետիս խօն-
դութեան մատուցանիցէ նմա,
թէ որդի ծնաւ քեզ, Յաւել
ասէ, զնշմարիտն և ասա, թէ
կէս ընչիցդ գնաց:

Եթէ և ամենայն վճռովք ա-
սենին յաղթեսցէ ի դատի, տա-
կաւին խծբծէ զիաստաբանն իւր,
իբրև բազում ինչ յիւրոց ի-
րաւանց զանց արարեալ ի գրի
հարկանելոյ: Յորժամ սիրելիք
իւր հանդանակ արկանիցեն վասն
նորա, և ասիցէ ոք եթէ ուրախ
լիք, Եւ սրպէս ասէ, ուր զար-
ծաթ իւրաքանչիւր հատուցա-
նել կայ և ի վերայ այնը շնոր-
հապարտ ևս լինել որպէս երախ-
տառու:

ԻԲ

ՎԱՍՆ ՇԱՂԱԿՐԱՏՈՒԹԵԱՆ

Եաղակրատութիւն է շատ-
խօսութիւն երկայն և անխոր-
հուրդ բանից: Եւ շաղակրատ
է, որ առ առ ընթեր բազմեալ ան-
ծանօթի ուրառեք, սկիզբն առնէ
նախ զկին իւր նաղաբանել, ապա
երազ պատմէ՝ զոր աեսեալ է ի գիշ-
շերին, ապա որ ինչ յընթրիս ու-
րեք անցը անցեալ իցեն, զամե-
նայն մի ըստ միոջէ ի ճառ արկանել:

Ապա յետոյ իբրև բանն սասա-
կանայ, խօսել առնու՝ թէ մար-
դիկ ժամանակիս չարք են և յո-
սիք քան զհինսն, և թէ ցորեան
թեթևադին է ի վաճառու, և թէ
եկը օտարք եկեալ խռնեալ են
յոյժ ի քաղաքն, և զի ծով յետ
սպանդարամետական տօնիցննա-
ւարկելի է, և զի թէ անձրեւ

տայցէ Արամազդ՝ բարի յոյժ
լինիցի արտարէից, և զի ի գալ
ամին գործելոց է զագարակ իւր,
և զի գժուարին է զկեանսն պա-
ճարել. և թէ զայն ամ Դա-
միպսոս կանդնեաց զմեծագոյն
ջահն ի աօնս խորհրդակատարու-
թեանցն Իթմեարի, և թէ քանի՛
սինը իցեն թատեր երգարա-
նին, և թէ երէկ փսիսցի, և
թէ այսօր քանի՛ է ամսոյն, և թէ
զեմեարեան խորհրդատանցն ի
Բուգրոմիոն ամսեան են և քսան-
թապատիրն ի Պիանեփսինն, իսկ
ի Պոսիդէսնին ազարակային ըս-
պանդարամեատականցն: Եւ եթէ
երկայնամիտ ոք լինիցի առ նա,
չմեկնի բնաւ ի տեղւոջն:

Յայսպիսի մարդկանէ զերծ-
ուառութ ի բաց պարտ է սրա-
նալ, եթէ չկամիցի ոք տենդիւ-
ջերանիւ. զի որ ոչ զպարապոյ
ժամն գիտեն ընտրել և ոչ զան-
պարապութեան, ընդ այնպի-
սեացն գործ է ժուժկալել:

ԻԳ

ՎԱՍՆ ՇԱՏԽՈՍՈՒԽԹԵԱՆ

Եթէ զշատիօսութիւն ոք սահ-
մանել կամիցի, թուի լինել ան-
ժուժութիւն խօսից: Եւ այն-
պիսի շատախօսն է, որ եթէ
հանդիպեսցի ումեր՝ որ տայցէ
ինչ նմա զրոյց, Այդ ոչ ինչ է,
ասէ, ես գիտեմ զամենայն, և
եթէ անսաս՝ պատմեցից: Եւ ի
տանել միւսոյն զբանմն յառաջ,
իմացայ, ասէ, հասկացայ, կաց,
մի՛ մոռասցիս զոր տսելոցդ ես.
Քաջ է, յուշ ածեր ինձ. այդպէս
է ամենեւին. տես որպէս օգուտ
է խօսւն. վահ զոր մոռացայ.
Ժութով հասեալ ես իրացն. հա
վազուց և ես այդմ մնայի՛ տե-
սանել եթէ դայցես և յայն ինչ
զոր եսս գիտեմ: Եւ այլով այս-
պիսարար հինիւ թափ անկեալ

ի բաննն , չտայ ում և պատահէն ոդի կլանել :

Եւ իբրև այսպէս զամենեսեան վհատեցուցանէ , գնայ մատնէ համարձակ ի կաճառեալ ա . կումբս ատենից , և ի միջոյ խորհրդականութեանն զնոսա ի փախուստ ցրուէ : Եւ ի վարժարանս իսկ և ի կռուանոցս մաեալ խափան լինի հրահանդաց մանկաւոյն , և մատուցեալ զրուցատրէ ընդ մանկավարժուն և ընդ մարտուսոյցան : Եւ եթէ ասիցէ ոք թէ գնամ , զէտնորա ելանէ գայ մինչև ի առն նորա :

Իրաղեկ լեալ ինդրոց ժողովոյն , լու առնէ այսր անդր . պատմէ այսմ այնմ զմաքառումն որ առ Արիստօփոնիւ եղե * , և զլակեդէմոնացւոցն

* ի մէջ Դիմութենի և Եսքինեայ Հոլակաւոր վէճ ատենական յաղագս

մարտս պատերազմաց՝ որ առ Վիւսանդրիւ , և զոր ինքն երբեմն գովութեամբ խօսեալ իցէ ձառս ի ժողովրդեանն . և յասելն անդ շարախօսութիւն խառնէ զամբուխէն , մինչև կամ մոռանալ ընաւ ունկնդրացն , կամ ի քուն լինել , և կամ մինչ զեռ տակաւին բանքն ի բերան իցեն՝ թողուլ և ի բաց գնալ :

Դատ եթէ վարեսցէ ընդ այլս , արդելու զընկերսն ի դատէլոյ . ի թատերս ընդ այլոց պատահէալ խափան լինի տեսութեանըն . տաճարակից խրախճանաց հանդիպեալ՝ ուտել չժողացուցանէ :

պսակին , ոչ շատ ինչ յառաջ քան զառուրս թէոփրաստի : Այս՝ և լակելեմնացւոցն իրբ , որով զրաւ եղե պեղպապոնխական բազմամեայ պատերազմին , զրոյցը պառաւեալք էին և բանածանօթք ամենեցուն :

Որպէս զի գժուարին է լաւ
շատախօսին և իբրև ի լավեր
կայ լեզուն. թէ և քան զի
ծառունս կարկաչոս յանդիմա-
նեսցի լինելո ոչ լուսցէ: Եւ
ըստ իսկ մանկաւոյն իսաղ
ղեալ՝ համբերէ, յորժամ ինքը
անկանել նորա ձայն տացէ ոք
ինոցանէն և աղաչիցէ, թէ պատ-
մեալ ինչ մեզ, հայրիկ, մինչ
տացէ զմեզ քուն:

Ի՞Ռ

ԱՍԱՅՈՒԹԵԱՆ

Ասայօդութիւն է կցկցել իր
ման սուտ ըստ քիմո: Եւ
առաջօդ բարբ այն է, որ ի հան-
գիսէ լ բարեկամին առ ժամայն
ձևանոց և ժմանելով հարցանէ:
Շնուտի գաս, զինչ բանք են, ի-
շեն ինչ զրոյցք յաղագս այսու-
կամ այնը: Եւ անդրէն վերըս-
տին հարցանէ. Զիցին ինչ զրոյցք
նոր. և սակայն աւետիք բա-
րեց են: Եւ չմնացեալ պա-
տասիանւոյ, զինի կցէ. Զինչ
աւես, չլուար ինչ, ինչցյս ինն
ախութեան թուիմ մատու-
ցունել քեզ նորանոր զըսւցիւքս:
Եւ անդէն առ ձեռն պատրաստ
կայ նմա զօրական ոք կամ մա-
կան կ Աստիայ փողարի կամ Վիւ-
ճարտար ի նմին իսկ ի պա-

աերազմէն եկեալ*, յորմէ և ես
ինքն լուայ, ասէ: Ձի այնպիսի
վկայք են նորա բանիցն երաշ-
խաւորք, որոց ոչ ըստգիւտ ինչ
ոք ունիցի դնել:

Արդ ոռքա պատմեցին ինձ,
ասէ, եթէ որպէս թագաւորն
և Պոլիսապէրքոն ձակատ տուեալ
յաղթեցին, և ձերբակալ եղե
կասանդրոս **: Եւ թէ ասիցէ
ոք ցնա, Հաւատան դու այդո-
ցիկ, ասէ. Քաղաքս ողջոյն հնչէ
համբաւովն, և ելանէ երթայ
հոչակ. զի ամենայն ինչ զմի
զայդ գոչէ:

Զայս զկոռուոյն պատմէ, և

* Զիրս և զանձինա իւրոյ ժամա-
նակին յառակ օրինակի ածէ թէո-
փրաստ:

** Թագաւորն էր Արիդէոս եղբայր
Աղեքսանդրի մեծի, իսկ Պոլիսապէրքոն
զօրավար Աղեքսանդրի. որոց մար-
տուցեալ ի պարտութիւն մատնեցան
առաջի կասանդրի. իսկ աստ զրոյցը

թէ նախճիր մեծ գործեալ է.
և թէ այն իսկ նշան լինի նմա,
զի որոց մատն է յիրս աշխար-
հին՝ զամենեցուն նոցա զերեսս
այլագունեալ տեսանէ: Ասէ ևս,
թէ լուաւ զի առ նոսա թա-
քուցեալ կայ ի տան զաւուրս
հինգ այր ոմն եկեալ ի Մակե-
դոնից՝ ամենայնի ականատես:
Զայս ասացեալ՝ աղիտանայ, իբ-
րև ի սրտէ ողորմուկս արկա-
նէ. Զիարդ թուի ձեզ, ասէ.
վահ եղուկ կասանդրոս, ոհ թը-
շուառական. առնուցնուս ի միտ՝
զինչ է բախտ: Ապա գամագիտ
այնուշեակ բանիցն լեալ, ի վե-
րայ բերէ. Այլ զայս գու միայն
գիտառչիր, ասէ. և ընթացեալ
ընդ քաղաքն ողջոյն զնոյն զրոյց
տայ ամենեցուն:

Զարմացեալ եմ ընդ արսդ

սուտք են ի ստախօսէն յօդեալք ընդ
հակառակս իրացն ճշմարտութեան:

ընդ այդոսիկ . զի՞նչ արդեւք
խնդրիցեն զառասպելսդ կարկա-
տելով . զի ոչ միայն սուտ խօ-
սին , այլ և ձեռնունայն ելա-
նեն : Զի և բազում անդամ մինչ
գեռ ոմանք ի դոցանէ ունկնդիրս
զինքեամբ խմբէին ի բաղանիսն ,
զհանդերձն կորուսին . և կէսք
ի Ստոյիկեան գաւթին ընդ ծով
և ընդ ցամաք ձամարակելովն
յաղթանակ կանգնեալ , տաենաւ-
զանց գատեցան * . Են և որ բա-
նիւք քաղաքս առին քաջաբար ,
և առանց ընթրեաց մնացին : Ար-
դարձել ողորմելի են կեանք նոցա .
զի ո՞ր գաւթի՛ , ո՞ր կրպակ և ո՞ր
կողմ հրապարակին կայցէ , յո-
րում զցերեկն ամենայն չգեգե-
րիցիննոքա խեղդ արկեալքանիւք
ստութեան թափել զոգիս ամե-
նեցուն որ գնիցեն նոցա ունին :

* Պարտաւորեցան , առուզանեցան
վասն չերեկելոյ յատենի ըստ կիտին
եղելոյ :

ի Ե

ՎԱՍՆ ԱՊՇՈՒԹԵԱՆ

Ապշութիւն սահմանաւ ասա-
ցեալ՝ է դանդաղութիւն մտաց
ի բան և ի գործ : Եւ ապուշ
սյն ոք է , որոյ ինքնին հաշիւս
ինչ և գումար արարեալ քուե-
իւք , ցայն որ մերձն բազմեալ
իցէ հարցանէ՝ թէ քանի առ-
նիցէ : Եւ եթէ յատենի կալ
հասանիցէ ի պատասխանիս ամ-
բաստանութեան , ուշամուաց ե-
ղեալ յագարակ իւր գնայ :

Յորժամ թատերաց ի զնին
կայցէ , խոր ի քուն ըմբռնեալ
մինչեւ յարձակիլ ժողովոյն միայն
գտանի : Կատակերութեամբ շը-
ւայտեալ և գիշերայն արտաքս
ելեալ ի կարիս որովայնի , խա-
ծանի ի շանէ դրացւոյն : Առեալ
ինչ ինքնին դնէ ի աեղի ուրեք .

են երկինք։ Եւ հարցեալ յուն-
մեքէ, թէ քանի՛ ինչ մեռեալս
կարծիցես հանեալ այսօր ընդ-
դուռն Շերմաց, Որշափ ինձ և
քեզ բաւական լինիցին, ասէ։

և ապա ի վեր և ի վայր յուղէ
զայն և չկարէ դտանել։
իբրև զեկուսցէ ոք նմա, եթէ
այս անուն բարեկամ քո վախ-
ճանեցաւ, զի ի թաղումն եր-
թիցէ, արտմեալ և յարտասուս
հարեալ, ապա ասէ, Է՛՞ բարի
է։ Ու այդշափ միայն, այլ և ե-
թէ զարծաթ իւր առնջոց իցէ
ի պարտապանացն, վկայո ընդ-
իւր տանի։

Եւ ձմերանի կագի ընդ ծա-
ռային, թէ ընդէր չգնեցեր մեզ
ձմերուկս։ Զմանկունս իւր տագ-
նապաւ ստէպ վարեալ յարշաւ
և յըմբշամարտս, վաստակաբեկ
և տաժանակոծ ի ցտւս արկա-
նէ։ Եւ յանդի եթէ ինքն ոսպ-
նաթան եփիցէ, երկիցս արկեալ
աղ ի պոյտն՝ անուտելի առնէ։
Եւ իբրև Արամազդ անձրեւ
տայցէ, Քաղցր է, ասէ, նշան-
րել զաստեղս, թէպէտ և այլք
ասիցեն՝ թէ կաղոց նման սեաւ

իԶ

ՎԱՍՆ ԱՆԺԱՄՈՒԹԵԱՆ

Անժամութեան է չընտրել ըզ-
դէպ ժամանակ, որով այլոց վիշտ
հասանէ: Եւ անժամ է, յոր-
ժամ ոք եկեալ բան և խոր-
հուրդ ի մէջ առնուցու զիրաց
իւրոց ընդ այնպիսում՝ որ ան-
պարապն է յիւրոց ծանր զբաղ-
մանց: Նա և զննջեալն երթեալ
յարուցանէ, զի զրուցատրեսցէ
ընդ նմա, և որ ի չու կազմի-
ցին՝ խափանէ, և մատուցեալ
ինդրէ՝ զի սպասեսցէն մինչ ինքն
զգնայցէ:

Եւ յորժամ սիրուհին իւր
ջերմացեալ դնիցի, ցուցս և
կայթս առ նմա յօրինէ. և որ
վասն երաշխաւորութեան իտու-
գանս մատնեալ իցէ յատենէ, մա-
տուցեալ աղաչէ զնա՝ առնուլ

զինքն յերաշիի, և յորժամ վճիռ
դատին հատեալ և վճարեալ իցէ,
յայնժամ գայ հասանէ վկայ լի-
նել:

Ի հարսանիս հրաւիրեալ, անդ
սկսանի զազդէ կանանց շարա-
խուել: Որ յերկայն ուղերու-
թենէ այն ինչ մտեալ իցեն, զնո-
սա հրաւիրէ գնալ շրջադաշել
ընդ իւր: Եւ զոր միանդամ վա-
ճառեալն իցէ յառաջագոյն, կա-
րող է ի վերայ այնի և այլ ևս
ածել կացուցանել առգնողմ՝ ոք
առաւել տայցեն նմա զգինսն:
Եւ որ լուեալ և ուսեալ ինչ ե-
ցեն կանխաւ, յառնէ զնոյնս ի
ընէ վարդապետել նոցա: Մատ-
դեւր հոգայ զոր շկամի ինչ ոք
թէ առնիցի, բայց ամաչէ ասել
թէ մի:

Որ զոհս հանեալ իցեն և ծա-
խիցեն ի կոչունս, առ նոսա եր-
թեալ կոսոր մի մուրանայ: Եթէ
ծառայ գան ըմպիցէ, կացեալ

առ նմա պատմէ՝ թէ և իմ մա-
նուկ երբեմն այսպէս բրազոհ
եղեալ, չոգաւ խեղդ առ։ ի-
րաւարար կացեալ, մինչ գեռ
կողմանքն երկոքին ի հաշտու-
թիւն գալ հաւանեալը իցեն,
նա զնոսա ընդ իրեարս արկանէ։
Եւ պարել կամեցեալ, զայն որ
չե իցէ ընդ գինիս մտեալ զձե-
ռանէ առեալ ձգէ։

Իէ
ՎԱՍՆ ԸՆԴՎԱՅՐԱՀՈԳՈՒ-
ԹԵԱՆ

Ընդվայրահոգութիւն թուի
անշուշտ լինել բան և գործ ի
ցոց լոււակամութեան։ Եւ այն-
պիսին է ընդվայրահոգ, որ յա-
րուցեալ խոստանայ զոր չկա-
րէն. և թէ ամենեքեան հաւա-
նին իմիք արդար լինելոյ, նա
զմիոյ իմեքէ հակառակութիւն
յարուցեալ՝ յանդիմանի։ Հրա-
ման տայ ծառային խառնել զի-
նի առաւել քան զոր կոնա-
կանքն կարեն ըմպէլ։
Կռուելոց կրծիմ ընդ մէջ ան-
կեալ, ևս առաւել բորբոքէ։ Ի
ձանապարհ յոր ոչ գիտէ՝ ա-
ռաջնորդ մտանէ, և ապա չկարէ
ելի աղագս գտանել։ Մատու-
ցեալ հարցանէ զզօրագլուին,

ԻՂ

ՎԱՍՆ ԾԵՐՈՒՄՄՆՈՒԹԵԱՆ

Ծերուսմնութիւն թու ի ճի-
գըն և ջան ի վեր քան զշաստկն :
Եւ ծերուս կամ անագանու-
սումն նա է , որոյ անագանի
ընդ ուսումն եկեալ , և վաթուր-
նամենի ուսեալ ի բերան աազս
քերգածաց , արտասանէ ի խըն-
ջոյս , և վերանայ բանն ի նմանէ :
Եւ յորդւոյ իւրմէ հրահանդի
ի տէգ և յասպար և ի վերջա-
պահութիւն բանակի . և ընդ
պատանեակս գումարի ջահար-
շաւ լինել ի տօնս զիւցաղանց *

* Ի տօնս Ապանդարամետին և այ-
լոց զից ոմանց և դիւցազանց երի-
տասարդք ջահ ի ձեռս բանդագու-
շեալ և կոկոզացեալ աստուապա-
րարկ լինելով ընդ բաղաքն ընթա-
նային :

Երբ ձակատ յօրինեսցէ և զինչ
տացէ հրաման յետ վաղութին :
Եւ առ հայրն երթեալ պատմէ ,
թէ մայրն արդ ես ի քուն է
ի սրսկապանի անդ : Եթէ բժշկին
պատուէր եղեալ իցէ չուալ գինի
տապացելումն , ինքն Տուք , ա-
սէ , զի զփորձ առնուլ կամի՞ն
թէ ի լաւ անդը ըջեցի՞ արդեւք
չիւսանդն :

Եթէ ուրուք կին մեռանիցի ,
արձանագրէ ի վերայ շիրմին զա-
նուն զառնն նորա և զհօրն և
զմօրն և զնորին ինքեան ըշ-
կնոշն , և թէ որպիսի ինչ ոք
է , և յարէ զինի , թէ սոքա ա-
մենեքեան ընտիրք և պատուա-
կանք էին : Եթէ երդնուլ հա-
սանիցէ , ասէ առ որ շուրջն կան
թէ և յառաջ բազում անգամ
երդ մնի եղեալ եմ :

Եթէ ի զոհս Հերակլի կոչեսցի, եղեալ զհանգերածն՝ բուռն հարկանէ զարջառոյն ընդուլնել զնա. և երթեալ ընդ հրահանգս վարժոցապն անցանէ: Ի տեսիլս խաղուց գուեհաց զերիս և զչորս նուագոն ի գլուխ գեգերեալ մնայ, ի միտ առնուլ զեղանակս երգոցն:

Սաքաղեայ * նուիրեալ զանձն ի նորընծայութիւն, գերազանցել նկրտի զայլովք առ քրմին: Քրմուհեացն սիզեիս մտանէ, և նկախարիսար զդրունս տարփածուին արարեալ, և չարագան ի հակառափող հոմանւոյն թուպեալ, ի գատասատան վարէ զնա:

Եթէ զայլոյ ուրուք ձի կա-

* Սպանդարամետական խորհրդոցն և կրօնից տուիալ զանձն ի նորընծայութիւն. զի Սաքաղիոս է ըՍպանդարամետ, որ այն ինքն է Դիոնիսոս, Բաքոս:

լեալ յագարակ գնայցէ, ջանայ զՃանապարհայն ընդ կիրթ ձիաւ վարութեան ելանել, և անկեալ վիրաւորէ զդլուխ իւր: Զհանգանակողսն ընդ իւր ի գիներբուս առնու առնի ի տամնլուերեան խաղս*: Եւ զերկայն արձանին խաղս խաղայ **, և ընդ արբանեկին նետընկէց լինի, և ընդ մանկածուին աշտէնս արձակէ, և խառն ընդ մանկաին դաս լսէ ի նմանէ՝ իբրև յանհըմտաց իմն կարգի գնելով զանձն: Ի բաղանիս ըմբամարտեալ՝ ըստէս զդաւակն տասանէ, զի քաջակիրթ երեւեսցի: Եւ յորժամկանայք իցեն, ի կաքաւ մտաբերէ՝ անձամբ անձին դայլայլիկս մրմնչելով:

* Խազք կանանց էին անարժանք, և ալեոր հասակին ամենեին անլայելչականք:

** Եր արձան կամ կոթող ինչ, յոր զնեասն արկանէին որբ ի զիպաձգութիւն կամէին ուսանել:

Ի՞՞.

ՎԱՍՆ ՎԱՏՈՒԹՅԵՍՆ

Վատութիւն թուի թէ երա
կիւղագին ինչ լքումն իցէ սըսի
և մտաց: Եւ վատ այն ինչ որ
է, որ ի նաւելն՝ զսարաւանդան
նաւո հինից ասէ լինել, ի ծփի
ալեացն՝ հարցանէ, եթէ իցէ
ոք ի նաւին աննուեր դից*: և
զաշսն ի վեր ամբարձեալ՝ հար-
ցանէ զնաւուղիղն, եթէ զիւ
ուղւոյն ունիցի, և զի՞ արդեւ
խորհիցի զօդոցն: Եւ առ ըն-
թերակացն ասէ, թէ յանից
ինչ զարհուրեալ եմ. և հանեալ
զպարեգօտ իւր՝ տայ ցմանուի,

* Որ չէին ընծայեալ ի խորհուրդն
և ի կրօնս դից, ամբարիշտ համա-
րէին, և նաւելն ընդ նոսա՝ վատն-
գաւոր:

և աղաչէ փոքր մի ի ցամաք կոյս
վարել զինքն: Յթէ ընդ հետեւակամարտս զի-
նուորեալ գտանիցի, իբրև այլք
թիկունս ուրեք հասանելոյ
առնուցուն, նա ձայն առնէ
ա և աղաչէ, կալ վայր մի
և տեսանել. Զի գործ է, ա-
ճանաչէլ որ կողմ թշնա-
սցն իցէ: Խսկ զիօշիւն խաղ-
առեալ, և տեսեալ զան-
ուլսն ի մարտին, ասէ առ որ
ոչն. կան, թէ առ Ճեալ տագ-
պին ի զէն ընթանալոյ մո-
ւայ առնուլ զսուսերս: Եւ
դէ՞ ի խորանն, և անտի դէտ
նէ զմանուկն՝ հայել լլատեսէլ
որ արդեւք իցէ թշնամին. և
զէն թաքուցեալ զսուրն ի
մարս մահմացն՝ ընդ վայր յածի
բազում ժամանակ իբրև ի խոյզ
ի խնդիր նորին:

Եւ ի վրանէ անտի տեսեալ
ի սիրելեացն զոք ածեն վե-

բաւոր, ընթացեալ առ նա քա-
ջալերէ սրտապնդէ, ուս տայ
ընդ նովաւ մտանէ, առեալ տա-
նի. և սպաս բժշկութեան հա-
րեալ, ջնջէ զարիւնն ու պնդաւ,
և նստեալ առ նմա՝ զհանձնն ի
խոցոյն վանէ, զամենայն ինչ առ-
նէ, բայց միայն զի ընդ թշնա-
միսն ի կոխւ մի՛ մացէ, Եւ մինչ
գեռ ի նշան մարտի զպատե-
րազմական նուագմն փողարն գո-
չիցէ, նա նստեալ ի խորանի
անդ, Գրող զքեզ տարցի, ասէ.
սև արե, ստէպ անդուլ ազգե-
ցութեամբ չտաս մարդոյ նիրէ
առնուլ:

Եւ յօտարին վիրաց արիւնա-
թաթաւ ընդ առաջ ելեալ դար-
ձելոցն ի կոռուոյն, պատմէ՛ թէ՛
որպէս ի վտանգ անհնարին տու-
եալ զանձն՝ զոմն ի սիրելեացն
ապրեցոյց: Եւ ի ներքս առ ան-
կեալն վիրաւոր մուծանէ զնո-
սա, տեսանել զքաղաքացին իւ-

րեանց և զտոհմային. և միում
միում ի նոցանէ կացեալ զըու-
ցէ, թէ զիարդ ինքնին ի գիրկո-
իւր բարձեալ ած յանձանձեաց
զնա ի վրան անդր:

L

ՎԱՐՆ ՍՆԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ

Անտապաշտութեւն թուի թէ
իցէ առելորդ երկեւլ դից։ Եւ
սնապաշտէ, որոյ լուացեալ յաղը
բեր զձեռսն և սրսկեալ զան-
ձամբ զջուր սրբութեան, առեալ
դափնի՝ ի բերանն՝ այնպէս շրջի
զօրն ցերեկ։ Եւ զՃանապար-
հայն՝ եթէ անցցէ զնովաւ կա-
տու, չգնայ յառաջ՝ մինչև եր-
թիցէ ոք ընդ նոյն, կամ թէ
ինքն ընկենուցու քարինս երիս
ի վերայ ճանապարհին։

Յորժամ օձ ի տանն տեսա-
նիցէ, եթէ պարիասն իցէ՝ զԱւ-
բազիսս կարդայ, իսկ եթէ սուրբ

* Զւափնոյ նանրահաւատ կարծիք
էին, թէ հալածիցէ զամենայն վտանդ՝
յորոց վերայ գտանիցի։

ասացեալն՝ անդէն վաղվաղակի
ի մեհենի կանդնէ։ Որ ի կիցս
ճանապարհաց վէմք կայցէն օ-
ծեալք, մատուցեալ հեղու ի վե-
րայնոցազիշ իւղոյն, և ի գուշն
անկեալ երկիր պատահնէ և գնայ։

Եթէ մուկն զպարկ ալերն
կրծիցէ, երթեալ զիթւսահմայ
հարցանէ, զինչ գործել իցէ. և
առեալ պատասխանի, թէ երթ
տուր կարկատել մորթերործին,
ոչ անսայ, այլ ի բաց հանէ
զպարկն և զոհս ընդ այնը մո-
տուցանէ։ Ատէպ և յաճախ սրբէ
զտուն իւր, ասելով թէ Եկա-
զաւայ արկածք ի ներբս կան
անկեալ։

* Եկատէ դիք լուսինն եր, առ որ
չանէին զպատճառս վերնոտութեան
կամ լուսնոտութեան և զայլոց ինչ
կամտից. և այս են արկածըն Եկա-
տեան։ Այս և յաջորդքն ամենայն
սնոտի պաշտամունք էին և հարց

Եթէ յերթալն ի տուն բու
տեսանիցէ, խոսվի և գոչէ, Վէհդ
Աթենաս, և այնպէս ասկա ան-
ցեալ գնայ: Ոչ ի գերեզմանս ե-
լանէ, ոչ յուզարկ մեռելոյ և ոչ
առ ծննդական կանայս առնու-
յանձն գնալ, այլ Պիտոյ է ինձ,
ասէ, սուրբ Հինել ի պղծութե-
նէ: Ի չորրորդս և յեւթներորդս
առուրց հրաման տայ գնի ե-
փել ի տան, և ելեալ գնէ մրտե-
նիս և պնակ մի կնդրուկ, և
մտեալ պսակէ զօրն ի բուն զհեր-
մափրոդիտական դրօշեալն: *

Եւ իբրև երազ աեսանիցէ,
գնայ առ երազահանս և իղձս և

խարանք ըստ իմիք իմիք դիցն կար-
ծեալ տեսլութեանց:

* Դրօշեալք էին՝ որոց զլուխն էր
Ափրոդիտեայ, իսկ այլն առնայն՝
Հերմեսյ, Գինին յամենայն պաշտա-
մունս յաճախեալ էր նուէր հեղեալ
դից, իսկ մուրտն ձօնի Ափրոդիտեայ:

հաւագէտու, հարցանել՝ թէ առ
մ ի գիշ կամ ի գիցուհեաց ար-
ժան իցէ յաղօթս կալ: Եւ ձօ-
նեալ զանձն առ որփէական *
խորհրդակատարոն՝ երթայ ամ-
սոյ յամիս հանդերձ կնաւ. իսկ
թէ կինն չպարապիցէ, առնու-
ընդ իւր զդայեակն և զման-
կունսն:

Եւ եթէ ի ծովլ լոգանալ կա-
միցի, և հայիցի ոք ընդ նա,
խստորս զգիխուին արկանէ, զի
մի ոք չարակնեսցէ ի գեղ նո-
րա **: Եւ ելեալ ի կիցս փողո-
ցաց՝ լուանայ զգիուխն, և կոչե-
ցեալ քրմուհիս՝ ինդրէ սրբել

* Որփէական խորհուրդքն նոյն իսկ
սպանդարամետականքն են. և քուրմբ
նոցա խորհրդածուքն՝ մոլիք ոմանք
էին և երից դանդաց դիմք:

** Ցետին իմաստդ թերի է ի բնա-
գրին և աղօտ. այդպէս մարթի ձեա-
նալ և լրանալ:

զինքն մկնարիսվ և սկնդկաւ * :
Մոլի զօք կամ վերնոտ թէ տե-
սանիցէ, սոսկացեալ քստմնեալ
ի ծոցն թբանէ :

* Զմկնառիսն և զսկնդռւկն զոհեալ
ծխէին չուրջ զսբքեցելովն :



L.U.

Վ ԱՐԱ ՉԱՐԱԿՈՍՈՒԹԵԱՆ

Զարախօսութիւն գրդիս է
հոգւոյ ի բանս չարս։ Եւ չա-
րախօս այն է, որ հարցեալ զու-
մեքէ՝ թէ ով ռք իցէ, հանգոյն
տոհմաթիւ ծննդաբանիցն՝ Արդ
նախ, ասէ, յազդէն նորա ըս-
կիզբն առից ճառելոյ. և ազգա-
համարն այս է։ Հայր նորա յա-
ռաջ Սովորաս ոմն անուն էր,
և իզօրականին եղեւ Սովորաս-
տոն, և ապա ի ժողովրդականման
գրեցաւ։ Մայր նորա յազնուաց
թրակացոցն է, և անուն նա-
զելոյն Շուշնագուաւ։ Եւ

* Զանունդ առ ի ծաղր ստեղծանէ
չարախօսդ, որպէս թէ ասել թերեւս,
ճշմարիս իմա զասացեալքս զնմանէ
իբրև զագուաւ սպիտակ:

զսոցանեւ ասի՞ թէ քաջազգիք
են յաշխարհին իւրեանց . իսկ
այրդ այդ , այնպիսեացն զաւակ ,
չար և մտրակի արժանի :

Առ այլ ոմն ասէ . Գիտեմ գի-
տեմ զկանայօն՝ զորոց գուդ առ-
իս զաւանցես : Եւ առ այլս ան-
ցեալ՝ ասէ . Այս կանայք են՝
որ զանցաւորս ի ճանապարհէ
յափշտակեալ վարեն , դոբին և
առ գուրս գաւթին հպատա-
կեն :

Եւ եթէ այլ ոք ուրեք բամ-
բասիցեն զգք , զկնի կցէ և նա .
Զայրդ զայդ , ասէ , ես քան զա-
մենեսեան ատեամ . զի և ժա-
հագէմ ոք է յերեսացն , և չա-
րեօք անզուգական : Եւ նշան
այն է , զի կնոջ իւրում՝ որ բա-
զում տաղանդս եբեր նմա ընդ-
իւր պաշտատականս , երիս պը-
զինձս տայ ի ռոճիկ . և զմանուկն
ծնեալ նմա ի նմանէ՝ ցուրտ

ջրով հրամայէ լուանալ յաւուրն
Պոսիդոնի * :

Եւ յակումբս բազմականի ի
յառնել ուրուք և գնալ , զնա
ի ձեռն տռնու . և ի նմանէ
սկիզբն արարեալ՝ ոչ գադարէ
մինչև յամենայն ընտանիս նորա
հասուցէ զլուտանսն . և զվախ-
ճանեալսն անգում ընդ վայր հար-
կանէ : Եւ զայս ամենայն՝ հա-
մարձակութիւն կոչէ և ուամ-
կապեառութիւն և ազատութիւն ,
և ի կեանս աշխարհիս զայն
քազցր քան զամենայն վարկանի :

Այս չարախօսութեան մար-
մաջ մուեկանս և խորթաբարոյս
առնէ զմարդիկ :

* Տօն՝ որ ի խոր ձմերայնի հան-
դիպէր :

Կ Ա Տ Ա Ր Ե Ց Ա Ն


ՆԿԱՐԱԳԻՐԻ ԹԷՌՓՐԱՍՏԵԱՅ

ՑԱՆԿ ԳԼԽՈՅ

Թ.	ՑԱՆԿՈՎՐԱՍՏ առ ՊԱ-	
	ՂԻԿՂԵՍ	9
Ա.	ՎԱՍՆ ԽՈՐԱՄԱՆՊՈՎ-	
	ԾԵՎԱՆ	12
Բ.	ՎԱՍՆ ՍՈւտակասպա-	
	ԱՆԾԾԵՎԱՆ.	15
Գ.	ՎԱՍՆ ՄԱՐԴԱՀԱՖՈՎ-	
	ԾԵՎԱՆ	19
Դ.	ՎԱՍՆ ՄԵԺԱՐԳՈՎԾԾԵՎԱՆ.	21
Ե.	ՎԱՍՆ ԱՆԱՎԻԱՌՈՎ-	
	ԾԵՎԱՆ	23
Գ և Ե	ՎԱՍՆ ԱՆԱՎԻԱՌՈՎ-	
	ԾԵՎԱՆ՝ ԱՅԼՈՎԼԱՐԳԱՎ.	26
Զ.	ՎԱՍՆ ԱՄԲԱՐՀԱՎԱ-	
	ՀՈՎԾԵՎԱՆ.	30
Է.	ՎԱՍՆ ԱՄԲԱՐՏԱՎԱ-	
	ՀՈՎԾԵՎԱՆ.	34
Ը.	ՎԱՍՆ ԳՈՐՈՎՈՎԾԵՎԱՆ.	36
Թ.	ՎԱՍՆ ՎԻԱՆԾԾԵՎԱՆ .	39

Ժ. Վասն բրտութեան	41
ԺԱ. Վասն զազրութեան	44
ԺԲ. Վասն լրբութեան	46
ԺԳ. Վասն ցոփութեան	50
ԺԴ. Վասն չարասիրութեան	53
ԺԵ. Վասն անշնորհութեան	55
ԺԶ. Վասն անամօթութեան	58
ԺԷ. Վասն դօշաքաղութեան	60
ԺԸ. Վասն ագահութեան	64
ԺԹ. Վասն կծծութեան	67
Ի. Վասն կասկածութեան	71
ԻԱ. Վասն տրանջութեան	73
ԻԲ. Վասն շաղակրասութեան	75
ԻԳ. Վասն շատխօսութեան	77
ԻԴ. Վասն ստայօղութեան	81
ԻԵ. Վասն ապշութեան	85
ԻԶ. Վասն անժամութեան	88
ԻԷ. Վասն ընդվայրահոգութեան	91

ԻԲ. Վասն ծերուսմնութեան	93
ԻԹ. Վասն վատութեան	96
Լ. Վասն սնապաշտութեան	100
ԼԱ. Վասն չարախօսութեան	105



2001

2013

2001

«Ազգային գրադարան»



NL0015203

